14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2005 ՈՒՐԲԱԹ 185 (3351)

Azg Ազգ

Գրականության Նոբելյան մրցանակ Հարոլդ Պինտերին

ՍՏՈԿՀՈԼՄ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Շվեդիայի գիտությունների թագավորական ակադեմիան հայտարարել է գրականության գծով Նոբելյան մրցանակակրի անունը. դա անգլիացի հայտնի դրամատուրգ եւ սցենարիստ Հարոլդ Պինտերն է: Հարոլդ Պինտերը XX դարի ամենաօրիգինալ թատերագիրներից մեկն է, հետպատերազմյան բրիտանական դրամատուրգիայի դասական, 29 պիեսի հեղինակ: Պինտերի առավել նշանավոր պիեսների շարքն են դասվում «Թեթեւ ցավերի մեջ», «Պահակը», «Սիրեկանները», «Վերադարձ տուն», «Հին ժամանակներ», «Ոչ մեկի հողը», «Լռանի լույսը» եւ այլն: Պինտերը հայտնի է նաեւ որպես գեղարվեստական ֆիլմերի ռեժիսոր եւ սցենարիստ՝ «Ծառան», «Դժբախտ դեպք», «Ֆրանսիացի լեյտենանտի կինը», «Դավաճանություն»: Այս տարի գրականության գծով Նոբելյան դափնեկրի անունը հայտարարվեց վերջինը: Գրականության գծով դափնեկրի անունը Ստոկհոլմում պետք է հայտարարվեր դեռ մեկ շաբաթ առաջ, սակայն հետաձգվեց: Նման արտառոց ուշացման առնչությամբ սկսեցին լուրեր տարածվել, որ շվեդական ակադեմիայի անդամները չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ 2005 թվականի դափնեկրի թեկնածության առնչությամբ:

«Զավախքում կա ներքին լարվածություն, որն անորոշության հետեւանք է»

Դավիթ Ռուսակյան. «Եթե այսպես շարունակվի, ժողովուրդն անկախություն էլ կպահանջի»

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հոկտեմբերի 12-ին, ինչպես երեկվա համարում գրել էր **«Ազգը»**, անհայտ անձինք Ախալքալաքում տարածել են թռուցիկներ, որոնք ստորագրել է այսպես կոչված «Ախալցխայի ազատագրման բրիգադ» մինչ օրս անհայտ կազմակերպությունը: Ռուսերեն թռուցիկներում, որոնց վրա նկարված է Թուրքիայի խորհրդանիշը, աստղ եւ կիսալուսին, ջավախահայությանը հրամայվում է անհապաղ դատարկել երջանը եւ գնալ Հայաստան, Ռուսաստան, Ամերիկա կամ այլ վայրեր: Հակառակ դեպքում, զգուշացվում է թռուցիկում, հայերը կենթարկվեն կոտորածի, ինչպես դա եղավ 1915 թ.:

Սամցխե-Ջավախքի հասարակական կազմակերպությունների խորհուրդը տարածած հայտարարության մեջ կարծիք է հայտնում, որ ով էլ լինի այս ակցիայի հեղինակը, «նա խաղում է կրակի հետ»: «Սա եւ մեկ փորձ է երջանի բնակչությանը հանելու հավասարակշռությունից: Իրավիճակի սրումը որեւէ լավ հետեւանք չի ունենա ո՛չ վրացի եւ ո՛չ էլ հայ բնակչության համար»:

Տես էջ 3

Пришел час возмездия

Армяне Ахалциха! Мы идем! Кто стоит у нас на пути – умрет!
Тысяча лет вы отравляете воздух нашей земли!
Убирайтесь с нашей земли в свою Армению, Россию, Америку – куда хотите. Мы не потерпим здесь даже вспоминания о вас! Не пытайтесь противостоять воле всевышнего!
Скоро земля Ахалцихе опять станет нашей, кто не слышит этого сейчас, пожалеет, что родился.
Неверные собаки, оставьте добро нам и бегите скорей, ваши предки помнят 15 год.
Русские вам не помогут, их часы на нашей земле тоже сочтены, их продажные шакалы армяне тоже убирайтесь!
Знайте, час расплаты за наши унижения близок, торопитесь и не ошибитесь. Уйти жить – остаться умереть.

Бригада освобождения Ахалциха.

ԵՎՐՈՄԻՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայում հայտնաբերված թռչնագրիպի վիրուսը՝ մահացու

H5N1 մահացու թռչնագրիպի վիրուսն է հայտնաբերվել Թուրքիայի թռչնաբուծարաններում եւ նույնը կարող է ներկա լինել նաեւ Ռումինիայում, հայտարարել է երեկ Եվրամիության առողջապահության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի նախագահ Մարկոս Կիպրիանուն Բրյուսելում կայացած մամլո ասուլիսի ընթացքում: «Թուրքիայում հայտնաբերված H5N1 վիրուսը մեծապես պաթոգենիկ է», ասել է նա եւ ավելացրել, որ իրենք դեռեւս վստահ չեն, թե Ռումինիայում հայտնաբերվածները նույն կարգի են:

Երեքշաբթի օրն արդեն Եվրամիությունն արգելք էր դրել Ռումինիայից կենդանի թռչնեղենի, թռչնամսի եւ փետուրների արտահանման վրա: Ինչ վերաբերում է Թուրքիային, ԵՄ-ը պատրաստվում է մինչեւ առաջիկա ապրիլ ամիսը երկարաձգել այդ երկրից կենդանի թռչնեղենի եւ փետուրների արտահանման վրա դրված արգելքը:

Թեեւ H5N1 վիրուսը մարդկանց հետպությամբ չի վարակում, սակայն 2003 թվից ի վեր 117 մարդ է վարակվել, որոնց մեծ մասը թռչնաբուծարանների աշխատողներ են: Վարակվածներից 60-ը մահացել է:

Բուզանդի փողոցի հերթական արարը

Բուզանդի փողոցի ոդիսականում նոր դրամա է զարգանում: Երեկ ցերեկով նույն փողոցի 17 շենքի 5-րդ տան բնակիչ Հովհաննես Հովհաննիսյանը հրավիրվել է ոստիկանության Կենտրոնի բաժանմունք: Բայց սա ավարտը չէ: Մինչ ժամը 18:30-ը նրանց տունը պատվարված էր կարմիր բերետավորներով: Բնակիչների ահաբեկվածությունն ու սպառնալիքները փոխարինում էին միմյանց: Հովհաննիսյան ընտանիքն ոտղակի համոզված էր, որ կատարածն իրենց բակարանը լքելու հարկադրանք է: Նրանք, սակայն, տեղի տալու մտադրություն չունեն: Եվ մինչ երեկ երեկո Հովհաննիսյանները տեղեկություն չունեին ոստիկանություն տարված իրենց որդուց՝ Հովհաննեսից: Քիչ այն կողմ ոստիկանության աջակցությամբ փորձում էին հիմնահատակ անել արդեն իսկ կիսավեր Բուզանդի 23 տունը: Բնակիչները դիմակայում էին հնարավոր խելամիտ ձեւերով: Տանտիրուհին՝ Անժելա Մուրադյանը ողջ ընթացքում տան կտուրին կանգնած փորձում էր ոստիկաններին հավատացնել, որ նրանց գործողությունները մարդկային չեն, որ գոնե իր վաստակն այս երկրում պետք է հարգվեր, եթե հաշվի չեն առնվում սեփականատիրոջ իրավունքները: Մի քանի ժամ տեւած մեղմ պայքարն ավարտվեց ոստիկանների հեռանալով: Մինչ այդ նրանցից մեկը՝ կոչումով կապիտան, սպառնալի ու անհարգալից տոնով փորձեց արգելել իրեն եւ գործընկերներին լուսանկարել տարածքում աշխատող լրագրողներից մեկին. «Քեզ ասի մի նկարի, չնկարես: Հրապարակ լիքը մարդ կա, կարաս ընդեղ նկարես»:

Բուզանդի փողոցի բնակիչները փորձում էին հասկանալ, թե երբ կվերադառնան ոստիկանները ու չէին բացառում, որ դա լինի գիշերով: Եվ այս ամենն ընթանում էր Բուզանդի բնակիչների շահերը պաշտպանող «Ռայթ իրավաբանական խումբ» ՍՊԸ տնօրեն Վահե Գրիգորյանի ձերբակալության առնչությամբ հրավիրված ասուլիսին զուգահեռ:

Ն. Պ.

Արազ Ազիմով. «Ռազմական բյուջեի ավելացումը չի կարող ազդեցություն ունենալ կարգավորման վրա»

Ադրբեջանի փոխարտգործնախարարն, ըստ «Թուրան» գործակալության, ասել է, որ իր երկրի ռազմական բյուջեի ավելացումը չի կարող ազդեցություն ունենալ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա: Նշենք, որ 2006 թ. բյուջեով Ադրբեջանը ռազմական ծախսերին տրամադրել է 600 մլն դոլար, ինչը մոտ 4 անգամ ավելի է Հայաստանի ռազմական ծախսերից:

Արազ Ազիմովը հայտարարել է, որ ներկայումս լավ հնարավորություններ են ստեղծել ԼՂ հակամարտության կարգավորման համար եւ Հայաստանին հորդորել է օգտվել դրանից, քանի որ, նրա խոսքերով, ապագայում նման հնարավորություն կարող է չստեղծվել: Պրահայի գործընթացի շրջանակներում վերջին երկու տարում կայացած հանդիպումներում մշակվել են համաձայնության որոշ տարրեր, որոնք ներկայումս եւս քննարկվում են, ասել է Ազիմովը:

Նալչիկի վրա իսլամիստների ձեռնարկած գրոհը հետ մղվեց մեծաթիվ զոհերի գնով

Երեկ վաղ առավոտյան Կաբարդինա-Բալկարիայի գլխավոր քաղաք Նալչիկի շրջակայքում շրջապատման մեջ է ընկել 10 գրոհայիններից կազմված մի խումբ: Մարտի ընթացքում սպանվել է 3 գրոհային, վիրավորվել 1 միլիցիոներ: Դրանից հետո Նալչիկ են ներխուժել հարյուրավոր գրոհայիններ: Հանրապետության ՆԳՆ աղբյուրներ վկայակոչելով, ՌԻԱ գործակալությունը հաղորդում է մոտ 300 իսլամիստ գրոհայինների հարձակման մասին:

Մինչդեռ «Կավկազսկի ուզել» ինտերնետային կայքէջի տվյալներով, քաղաք են ներխուժել շուրջ 600 զինյալներ, որոնք իսլամական ծայրահեղականության ուղղություններից մեկի՝ վահաբիզմի հետեւորդներն են: Հարձակումներ են ձեռնարկվել օդանավակայանի եւ քաղաքի վարչական հաստատությունների վրա:

Հանրապետության ՆԳՆ-ում չեն բացառում, որ միլիցիայի եւ Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) շենքերի վրա հարձակումներ կատարված լինեն իրավապահ մարմինների ուշադրությունը շեղելու եւ շրջապատված 10 գրոհայինների խմբի ոչնչացում թույլ չտալու նպատակով:

Միջազգային լրատվական գործակալությունների տվյալներով, մարտերի ընթացքում սպանվել է ԱԴԾ 20 աշխատակից, 12-ն էլ վիրավորվել են: ՀՌՏ հեռուստալիքը նշում է, որ քաղաքում սպանվել են 50 գրոհայիններ: «Էխո Մոսկվի» ռադիոկայանը հաղորդում է, որ մի քանի գրոհայիններ գերի են ընկել: Բոլորն էլ «Ջամաաթ իսլամիա» արմատական խմբավորման անդամներ են:

Հարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Դմիտրի Կոզակը հետմիջոցներին հայտարարել է, որ իրավիճակը Նալչիկում վերահսկում են իշխանությունները: Նրա խոսքերով, մարտերի ընթացքում զոհվել են 12 խաղաղ բնակիչ եւ 5 միլիցիոներ: Քաղաքի 5-րդ միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել փոխհրաձգություն: Իրավապահները նշում են, որ երեխաներին հաջողվել է դուրս բերել շենքից:

Պ. Ք.

Երբ պետական լծակները գործում են հասարակ քաղաքացիների դեմ

Քաղաքացիական ազգային նախաձեռնության պատրաստած «Պետական կարիքների զոհեր» զեկույցի նախագիծը երեկ ներկայացվեց «Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների ազգային կենտրոնում» հրավիրված «Սեփականության օտարման խախտումները Հայաստանում» թեմայով քննարկմանը, որին ներկա էին գրեթե բոլոր օղակների ներկայացուցիչները՝ մարդու իրավունքների պաշտպանից մինչեւ Գլխավոր պողոտայի կառուցապատվող տարածքներից վտարված բնակիչներ: «Եթե այդ խնդիրը լուծելի տեսնեի, դրա վերաբերյալ արտահերթ զեկույցով հանդես չէի գա, այլ կգտնեի խոսելու այլ ձեւեր: Դա իրոք հետաքրքրվող խնդիր է: Օրինակ, Վրաստանում բնակիչներին տալիս են ընտրության հնարավորություն՝ կամ բնակարան ունենալ իրենց տների տեղում կառուցվող բնակելի շենքերում, կամ էլ ստանալ 30 տոկոս ավելի փոխհատուցում՝ փոքր տարածքների դեպքում: Բացի սեփականության իրավունքից, մարդն ունի նաեւ զարգացման իրավունք, ինչն աղահովում են կառավարությունն ու պետությունը», **«Ազգին»** ասաց **Լարիսա Ալավերդյանը**: Նա համոզված է, որ Երեւանի կենտրոնում ծագած խնդիրները կարելի էր լուծել անգամ կառավարության կայացրած որոշումների սահմաններում, սակայն առայժմ դրանց հանդեպ լուրջ ու պատասխանատու մոտեցում չի դրսեւորվում: «Ես համոզված եմ, որ սա սխալ ընտրված ճանապարհ է, որից հրաժարվելն ու ճիշտ մոտեցում ցուցաբերելը պահանջում են հոգեբանական, գուցե նաեւ նյութական դժվարություններ: Ցավալի փաստ է, որ իշխանավորների գործած սխալները բացասաբար են ազդում հասարակության վրա. իշխանավորներն իրենց զգում են ոչ թե պետության ներկայացուցիչ՝ պարտավորված պահելու երկրի պատիվն ու արժանապատվությունը, այլ պետական լծակները կիրառում են հասարակ

քաղաքացու դեմ: Դա նշանակում է, որ պետական շահ հասկացությունն օտարվել է մարդու իրավունքներից, ինչն ոտղակի անտրամաբանական է», հավելեց նա:

«Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» տնօրեն **Կարեն Դավթյանը** դժգոհ էր «Պետական կարիքների զոհերը» զեկույցի նախագծից, որովհետեւ՝ «Բնակիչները 1 քմ-ի համար ստացել են 600-900 դոլար, նույնիսկ՝ 850-1500 դոլար, կախված տեղից, կոմունալ վիճակից ու սեփականաշիրոջից: Ոչ մեկն անտուն չի մնում, բոլորն էլ կարողանում են բնակարաններ գնել, կենսական խնդիրներ լուծել, մեքենաներ գնել»:

Զարմանալի է, որ նրա տվյալներով, Երեւանի Բաղրամյան կամ Կիեւյան փողոցում այսօր կարելի է 15-30 հազար դոլարով 1 սենյականոց բնակարան գնել, որովհետեւ իրականում դրա արժեքը կրկնակի է:

«Ազգի» հարցին, թե քաղաքի ո՞ր մասում կարող է բնակարան գնել, օրինակ, Աբովյան 5 հասցեում ներկա պահին ապրող տիկին Գոհարը, որը 20 քմ-ի դիմաց պետք է ստանա 9 հազար դոլար փոխհատուցում, որն Դավթյանը պատասխանեց առաջարկով՝ «եկեք միասին գնանք եւ ուսումնասիրենք նրա կոմունալ պայմանները, գույքը»: Այսինքն, բնակիչը 1 քմ համար ստանում է 450 դոլար՝ ժամանակին կենցաղային շքեղ պայմաններ չստեղծելու համար, իսկ նրա խեղճուկրակ տան ամենակարող սեփականատերը նույն տան դատարկ հողատարածքի 1 քմ-ը կարող է վաճառել 1500 դոլարով:

«Պետական կարիքների զոհերից» իր դժգոհությունը պրն Դավթյանը չկամեցավ **«Ազգի»** հետ զրույցում հիմնավորել, քանի որ այդ մասին խոսել էր սրահից մեր դուրս գալու պահին: «Ես ասացի, դրա տեղում չեք եղել, խնդրեք թող ձեզ ասեն», ասաց նա եւ գնաց իր գործին:

«Ռուսունի եւ ընկերներ» փաստաբանական գրասենյակի փաստաբան **Արթուր Գրիգորյանը** շեշտեց, որ իրենք մինչեւ վերջ հետամուտ են լինելու Մարդու իրավունքների եվրոպական դատարանին Բուզանդի փողոցի բնակիչների ուղարկած գանգատներին, որովհետեւ՝ «այս իրավիճակը հնարավոր չէ հանդուրժել»:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Իշխանավորները մարտահրավեր են նետել փաստաբանությանը

«Շուրջ մեկ տարի փաստաբան Վահե Գրիգորյանին անհասկանալի եւ անհիմն հետաքննում էին ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները: Մեկ տարի առաջ նրան առաջարկվել է հավաքագրվել այդ ծառայությանը եւ տեղեկություններ հաղորդել իր հաճախորդների մասին, ինչը նա իրեն թույլ չէր տա որպես փաստաբան ու քաղաքացի: Նա մերժել էր այդ առաջարկը եւ գրավոր հայտնել հիշյալ ծառայության տնօրենին: Որոշ ժամանակ անց, սույն թվի մայիսին, ազգային անվտանգության աշխատակիցները մտել են Վահե Գրիգորյանի գրասենյակ՝ ներկայանալով մարդու իրավունքների պաշտպանի աշխատակիցներ, դրսեւորել են բիրտ վարքագիծ Վահե Գրիգորյանի գործընկերոջ նկատմամբ, պահանջել են փաստաթղթեր եւ ներկայացրել են ծանուցագիր: Այդ մասին փաստաբանը խոսել է մայիսի 31-ի հրավիրած մամլո ասուլիսում: Հունիսի 10-ին գլխավոր դատախազությունը հարուցել է քրեական գործ, մոտ 4 ամիս կասեցվել է նախաքննություն, որի ընթացքում Գրիգորյանը հրավիրվել է որպես վկա, բայց որպես փաստաբան հրաժարվել է ցուցմունքներ տալուց: Հոկտեմբերի 7-ին նա ձերբակալվել է, իսկ 10-ին՝ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը: Մենք գտնում ենք, որ քրեական հետաքննությունը պայմանավորված է ոչ թե կոնկրետ քրեական գործի նյութերով, այլ Վահե Գրիգորյանի գործունեությամբ, որ նա ծավալել է՝ պաշտպանելով Բուզանդի փողոցի բնակիչների շահերը, կապված այդ տարածքի իրացման հետ, որն ուղեկցվել է սահմանադրության խախտումներով», Փաստաբանների միությունում երեկ հրավիրված մամլո ասուլիսում ասաց Վահե Գրիգորյանի շահերը պաշտպանող փաստաբաններից **Տիգրան Աթանեսյանը**:

Փաստաբանին մեղադրվող արարքի վերաբերյալ նա հայտնեց, որ գլխավոր դատախազության հայտնաբերած հանցագործության տարրեր պարունակող դեպքը տեղի է ունեցել մոտ 2 տարի առաջ, բոլոր փաստաթղթերը եղել են բաց եւ հրապարակային, սակայն դատախազությունը «հանկարծակի» գտել է նրան հետաքննելու եւ կալանավորելու հիմքեր:

«Վահե Գրիգորյանի կալանավորումը մենք կապում ենք նրա համոզմունքների, մասնագիտական եւ քաղաքացիական դիրքորոշման հետ, դա մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանը զրկվեց իր հարեւանների նկատմամբ ունեցած մեծ առավելությունից՝ ունեցավ քաղաքական բանտարկյալ: Մենք հայտարարում ենք, որ ՀՀ օրենսդրության եւ միջազգային պայմանագրերով նախատեսված բոլոր հնարավորություններն օգտագործելու ենք այս ճշմարտությունը հասցնելու համապատասխան ատյաններին: Հասնելու ենք նրան, որ նա արդարացվելու է եւ ճշմարտությունն ի հայտ գալու», ընդգծեց նա:

Ասուլիսին ներկա էին փաստաբաններ Ռուբեն Ռուսունին, Տիգրան Աթանեսյանը, Արթուր Գրիգորյանը, Հակոբ Թադեւոսյանը եւ ուրիշներ: Նրանց առ այսօր հայտնի չէ, թե ինչ փաստերի հիման վրա է հարուցվել քրեական գործը. «Վահե Գրիգորյանին ակնհայտ շինծու մեղադրանքով կալանքի են ենթարկել առանձնապես խոշոր չափերի խարդախություն կատարելու համար: Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար հիմք է ընդունվել այն մարդու ցուցմունքը, որը մարդու իրավունքների պաշտպանին հայտնել է, որ հոկտեմբերի 7-ին իրեն բերման են ենթարկել եւ ինքը, գտնվելով հոգեբանական եւ բարոյական ճնշման տակ հարկադրված է եղել այդպիսի ցուցմունք տալ: Այդ տարեց մարդը տառապում է սրտի հիվանդությամբ, սրտի վիրահատություն է տարել եւ այժմ նրա առողջական վիճակը բավականին ծանր է: Մենք իրապես հիմքեր ունենք հայտարարելու, որ Վահե Գրիգորյանը կալանավորվել է շինծու մեղադրանքով», ասաց **Արթուր Գրիգորյանը**:

Ռուբեն Ռուսունին եւս պնդեց, որ Վահե Գրիգորյանը կալանավորվել է ապօրինի. «Ես շատ եմ ասել, որ մեր դատարանները դատախազության կցորդն են, ասել եմ ու էլի ասում եմ: Գաղտնիք չէ, որ տվյալ պետությունում դատավարական նորմերի պահպանությունը տվյալ պետության ժողովրդավարության ցուցանիշներից մեկն է»:

Ավանդների վերադարձման սկիզբը քաղաքական համաձայնության արդյունք է

Այսպես է գնահատում ՕԵԿ խմբակցության ղեկավար Սամվել Բալասանյանը

«Ծնվել եմ 1914 թվականին, մասնակցել եմ Հայրենական պատերազմին, գերի ընկել, այնտեղից ազատվել: Ազատից վերադառնալուց հետո աշխատել եմ Շամլուղի հանքերում՝ որպես հանքափոր, հետ գցել 44 հազար ռուբլի եւ հանձնել եմ խնայբանկին՝ ծերությունս հոգալու: Այժմ անկողնային հիվանդ եմ, երկրորդ կարգի հաշմանդամ, իմ եւ կնոջս թոշակները մեզ չեն բավարարում: Խնդրում եմ օգնեք՝ ստանալու խնայածս գումարները:

Գեղամ Աղաբաբյան,
Տավուշի մարզ, գյուղ Կողբ

Ահա այսպիսի հազարավոր նամակներ են գրել մեր ավանդատուները ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանին եւ ԱԺ ավանդների վերադարձի խնդիրն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովին՝ նրա գործունեությունն սկսելուն զուգահեռ: Դրանք կուղարկված էին ԱԺ «Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար Սամվել Բալասանյանի սեղանին: Ահա այս տարիի մարդկանց ավանդների վերադարձման խնդիրն է լուծվելու, փաստորեն, 2006 թվականի բյուջեի շրջանակում, որի շուրջն էլ ծավալվեց մեր զրույցը:

-Առայժմ հարցի լուծման այսպիսի դրվածքը՝ առայժմ միայն նպաստառու ավանդատուներին ավանդների փոխհատուցումը, շահարկումների առիթ չի՞ դառնա ձեր ընդդիմախոսների համար:

-Դում ո՞նց եք մտածում՝ 2001 թվականին անհավատալի էր, չէ՞, որ 2006-ին ավանդների վերադարձի գործընթացը կարող էր սկսվել: Հիմա սկսելո՞ւ են շահարկել, որ նպաստառուների ցուցակներում ընդգրկված նպաստառուներին ենք փոխհատուցում տալու: Սկզբից տալու ենք նրանց, որովհետեւ նրանց թիվը մեծ է: Մենք պայքարել ենք այս խնդրի լուծման համար, եւ այսօր քաղաքական դաշտում համաձայնություն է կայացել: Մենք միշտ էլ հայտարարում էինք, որ խնդիրը միայնակ լուծել չենք կարող՝ պետք էր քաղաքական դաշտում ներկայացված սպեկտրը միանա մեզ, ինչպես նաեւ ՀՀ նախագահի կարծիքը պետք է ունենայինք: Բավական աշխատանք կա ծավալելու, որպեսզի ավանդատուների վերաբերյալ տվյալները համադրվեն եւ սոցիալական խմբերի միջից կարողանանք դուրս բերել ամենախոցելի խավին: Եթե 2006-ին նախատեսվում է 1 միլիարդ դրամ՝ դա սկիզբն է, հետո այդ գործընթացը շարունակական է լինելու: 2007-ի բյուջեում, ՀՆԱ-ի աճից կախված, կարող է 1 միլիարդից ավելի գումար լինի: 2001-ին չէինք հավատում, չէ՞, որ 2006-ի բյուջեն կարող է 1 միլիարդ դոլարից ավելի լինի՝ ՀՆԱ-ի աճ կա, երկիրը զարգանում է: Երեւի կփորձեն շահարկման առիթ դարձնել, չգիտեմ, հաջորդ քառորյայի ընթացքում կերեւա. ճիշտն ասած՝ մենք պլիտեսի հարց է, ասված է, չէ՞, հաղթանակները շատ տարբեր ունեն, պարտությունները որբ են:

- Ավանդների վերադարձի շարունակականությունն ինչպե՞ս եք պատկերացնում:

- Կոալիցիա կազմող ուժերի մեջ կա հսկայական պայմանավորվածություն, որի մասին նաեւ արտահայտվեց վարչապետը, եւ 2007-2009 թվականների բյուջեի միջինժամկետ ծրագրում գումար է դրվելու՝ ավանդները փոխհատուցելու համար: Մինչեւ 2009 թվականը մենք պետք է վերադարձնենք խոցելի խմբի ավանդները, դրանից հետո, բնականաբար, գործընթացը կշարունակվի: Հետխորհրդային 14 երկրներում այդ գործընթացը շարունակական է. օրինակ Ռուսաստանում փոխհատուցել սկսել են 1991 թվականին եւ կավարտեն միայն 2020 թվականին: Լիտվայում ավանդների վերադարձի վերջը նախատեսված է 2025 թվականին: Բոլոր երկրների փորձը կա եւ պետք չէ այսօր երկրորդ շուն սարքել՝ տեսեք, միայն նպաստառուներինն են վերադարձնում:

- Իսկ օրենքի, որպես այդպիսին, քննարկելու ցանկություն ձեր ընդդիմախոսները չե՞ն ունենա:

- 2006 թ. բյուջեի օրենքի քննարկման ընթացքում ավանդների վերադարձման մեխանիզմները կառավարությունը կներկայացնի Ազգային ժողովին՝ հիմնականում խնդիր է դրվում այս հարցում բյուջեի օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելը: Բնականաբար, մենք կաշխատենք կառավարության հետ, կքննարկենք եւ կկատարենք մեր առաջարկները:

- Ավանդների վերադարձման հարցը քննարկող ժամանակավոր հանձնաժողովի մշակած առաջարկն ու այժմ կառավարության ներկայացրածը մո՞տ են իրար:

- Ըստ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության՝ ներկայացված էր դիֆերենցված տարբերակ, համաձայն որի առաջին 1000 ռուբլին առաջարկվում էր փոխհատուցել 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով, իսկ կոալիցիայի ներկայացրած նոր տարբերակով արդ դիֆերենցված բազան առաջին 1000 ռուբլին փոխհատուցվելու է 200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով:

Մ. Խ

Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է

Ժամանակին կոմկուսի Կրասնոդարի երկրկոմի առաջին քարտուղար Սերգեյ Ֆյոդորովիչ Մեդունովը հրապարակավ հայտարարեց, որ երկրամասում մշտապես գրանցված ապրում են 1,5 մլն հայեր: 15 տարում հայերի թիվը երկրամասում աճել է: Այնպես որ, ներկայիս նահանգապետը կամ անտեղյակ է, կամ էլ անտեղյակ է ձեւանում հայերի իրական թվին: Պետք է ենթադրել, թե գիտի, բայց չի ուզում, որ հայերը շատ լինեն: Ոաստի նշում է ծիծաղելի թիվ՝ 250-300 հազար: Նման սուտն այլատյացության բարձրագույն դրսեւորումն է: Այլատյացության մասին իրեն հարցրեք. ինքն ամենաառաջին այլատյացն է: Մենք չենք մոռացել նրա այն խոսքերը, թե «յան», «ովիչ», «օղլի» մասնիկներով ավարտվող ազգանունների տերերը «մեր քաղաքացիները չեն»: Ռուսաստանի՝ Հայաստանի պատմական դաշնակիցը եւ ռազմավարական գործընկերը լինելու պատճառով մենք չպետք է հրաժարվենք ճշմարտությունից:

ԱԲԱՄ ՄՈՄՋՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լուրերի սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,

Ընթացիկ

Առողջ հասարակությունը դեռի առագա է ֆայլում իր հեռ վերցնելով ամենակարեւորը, ամենաթանկը: Մարդկանց մի խմբի համար դա մարդասիրությունն ու գթաստությունն է, որի գործնական անունն է՝ հոսպիս: Հոսպիսը մխիթարության տուն է, ուր բարի մարդիկ թեթեւացնում են անբուժելի, անօգնական ու միայնակ հիվանդների տառապանքները՝ նրանց տրամադրելով ֆինանսական, սոցիալ-հոգեբանական օգնություն: Ողջ աշխարհով մեկ սփռված հոսպիսները կարելի է համարել հոսպիսային շարժում, որ իր ուսերին տանում է մարդկային խիղճը, ստացավությունն ու սերը իր նման հանդեպ:

Հոսպիսային ծառայությունը լինում է ստացիոնար եւ տնային, նայած թե ինչպիսի միջավայր է նախընտրում հիվանդը եւ ինչպիսի հնարավորություններ ունի երկիրը:

Գթաստության հայեցի դրսեւորում. «Հուսաբեր» բարեգործական հիմնադրամ

Հայաստանում հոսպիսի գաղափարախոսությունը պատմական անցյալ ունի: Դեռ չորրորդ դարում վանքերին կից ստեղծվում էին կացարաններ՝ անկելանոցներ, որտեղ հոգեւորականները օգնում էին մահացողներին համակերպվելու մահվան մտքի հետ, հաղորդություն էին տալիս եւ աղոթում էին նրանց հոգիների փրկության համար: Մեր օրերում «Հուսաբեր» բարեգործական հիմնադրամը (ստեղծվել է 1999 թվականին) փորձում է շարունակել նախնյաց գովելի գործը՝ դրան կցելով ժամանակակից աշխարհի փորձն ու հնարավորությունները: Հիմնադրամի նախագահն է Բաբկեն խահանա Հայրապետյանը, որը վստահ է, որ հոսպիսային գործունեությունը նախ եւ առաջ յուրաքանչյուր քրիստոնյայի ճշմարիտ ճանապարհն է, ինչպես բարությամբ կարոտյալին ծառայելու, այնպես էլ ինքնամաքրման ու ինքնահաստատման տեսակետից:

Հոսպիսի գաղափարները կյանքի են կոչվում «Հուսաբերի» անդամների միջոցով, որոնց մեջ կան ամենատարբեր ոլորտի մասնագետներ, տարբեր տարիքային եւ սոցիալական խմբերի ներկայացուցիչներ: Մարդիկ, որոնց համար կյանքն անհնարին է թվում առանց հոգատարության դրսեւորման կարոտյալի նկատմամբ:

Հայաստանում առաջին անգամ նշվեց հոսպիսի միջազգային օրը

Երեկ ՀՀ ԳԱԱ դահլիճում «Հուսաբեր» բարեգործական հիմնադրամը իրականացրեց գիտաժողով, որը վեր հանեց հայկական հոսպիսի զարգացմանը խոչընդոտող խնդիրներ, քննարկվեցին դրանց լուծման ուղիները: Ուռուցքաբանության ազգային կենտրոնի փոխտնօրեն **Գ. Բազիկյանը** ասաց, որ հոսպիսը խնամք է այն հիվանդների նկատմամբ, ում աղաքինումն արդեն իսկ անհնարին է, սակայն կյանքը նրանց համար դեռ շարունակվում է՝ պատճառելով անասելի ցավեր ու տկարություններ: Նման մարդկանց թիվը անցյալ տարի եղել է երկուսից երեքուկես հազար: Ընդգծենք, որ նման մարդիկ կան նաեւ յուրաքանչյուրիս շրջապատում, սակայն նրանց մասին քչերն են հոգում: Ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն **Հայրապետ Գալստյանն** էլ նշեց, թե քանի որ նախատեսվում է Հայաստանում ստեղծել ցավի դեմ պայքարի կենտրոն, ապա հոսպիսի կայացման խնդիրը պետք է քննարկվի այդ հարցի հետ համատեղ:

Գիտաժողովին իրենց օրհնությունը բերեցին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական գործերի կառավարիչ **Փառեն արք. Ավետիքյանը** եւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **Նավասարդ եպս. Կճոյանը**: Հոգեւոր հայրերը նշեցին, որ քրիստոնյաների եւ հոգեւորականների պարտքն է հոգածությունը տկարների եւ կարիքավորների հանդեպ:

Գիտաժողովի ժամանակ ցուցադրվեց նաեւ ֆիլմ, որ կոչվում է «Լքված տաճարներ»: Ֆիլմում հիվանդ ու անօգնական մարդիկ պատմում էին իրենց սոցիալ-հոգեբանական ծանր վիճակի եւ իրենց բաժին ընկած հակասական կյանքի ու դաժան փորձությունների մասին: Ֆիլմը վերջանում էր «Հուսաբեր» բարեգործականի տաք գծի հեռախոսահամարով, որը սակայն ներկաներից ոչ ոք գրի չառավ, մինչդեռ ֆիլմի հերոսուհիներից մեկի վերջին խոսքերն էին «Ծափեր չէի ուզում, ինձ պահեիք, մարդիկ...»

ԳԱԱ նախասրահում ներկայացված էր յուրօրինակ շրջանակներով լուսանկարների մի ցուցադրություն: Լուսանկարներում հուսաբերցիները, կարծես օրինակ դառնալու ակնկալիքով, օգնություն էին ցուցաբերում միայնակներին:

Գիտաժողովի նպատակներից էր նաեւ «Հուսաբեր» բարեգործականի ոտքերի հրապարակումը: Այն կոչ է բոլոր բարի կամքի տեր մարդկանց ընդգրկվելու աշխատանքային մի խմբում, որը հոսպիսի կայացման ծրագիր կմշակի եւ կներկայացնի կառավարությանը:

Հուսաբերցիները եւ նրանց խնամքին սպասող հազարավոր հիվանդներ սպասում են արձագանքների...

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Գթաստությունն անուն ունի՝ հոսպիս

Մխիթարություն դանդաղ մահով հեռացողներին



Նորագույն սարքավորում ակնաբուժական կլինիկային

«Գրանդ հոլդինգի» ներդրումը

Երեկ Մալայանի անվան ակնաբուժական կլինիկայի ղեկավար Ալեքսանդր Մալայանը եւ «Գրանդ հոլդինգի» տնօրեն Հրանտ Վարդանյանը ստորագրեցին համագործակցության պայմանագիր: Ըստ պայմանագրի՝ Հրանտ Վարդանյանն ակնաբուժական կլինիկային է տրամադրում Հայաստանում եզակի ակնաբուժական ախտորոշիչ սարքավորումների շարքում վերջին նվաճումներից մեկը՝ ցանցաթաղանթի համակարգչային պատկերը ստացող բժշկական մի գործիք, որի դիմաց առաջիկա տարիներին «Գրանդ հոլդինգի» ողջ աշխատակազմն անվճար կբուժվի կլինիկայում այնքան ժամանակ, մինչեւ կմարվեն ընկերության ներդրած դրամական միջոցները, որ ծախսվել են սարքը գնելու համար: Համագործակցության պայմանագիրը 30 տարվա է, հետագա տարիներին «Գրանդ հոլդինգը» շարունակելու է նոր սարքավորումներ եւ բժշկական միջոցներ տրամադրել բուժհիմնարկին նույն պայմաններով: «Այս գործարքով շահում են թե՛ մեր աշխատողները, թե՛ կլինիկան, թե՛ մեր ժողովուրդը, ասաց Հրանտ Վարդանյանը: Երբ ինքս բուժվում էի այստեղ, այս սարքի բացակայության պատճառով մեկնեցի Մոսկվա եւ հետազոտվեցի Ֆյոդորովի ինստիտուտում: Կարծում եմ, մեր ժողովրդի սոցիալական վիճակն այնքիսին չէ, որ ամեն մեկն անհրաժեշտության դեպքում կարողանա մեկնել Հայաստանից եւ հետազոտվել դրսում: Այսօր արդեն այս հարցը լուծված է»:

Ըստ պրն Մալայանի, այսօր, երբ աշխարհում ամեն 12 վայրկյանը մեկ կուրանում է 1 մարդ, իսկ ամեն րոպե՝ 1 երեխա, մենք առավել մեծ ուշադրություն պետք է դարձնենք սեփական առողջության խնդիրներին: Ակնաբուժական կլինիկա ամեն տարի դիմում է 15 հազար մարդ, որից 4 հազարը վիրահատվում է: Եթե տարիներ առաջ Հայաստանում նման խնդիրներ ունեցողների մեծ մասը 60-65 տարեկան էր, ապա վերջին շրջանում սանդղակն իջել է 50-55 տարեկանի: Ըստ Ալեքսանդր Մալայանի, խնդիրներից մեկը էկոլոգիայի հետ է կապված, մյուսը՝ սեփական առողջության հանդեպ հասարակության անհետեւողականության:

Պրն Մալայանի հավաստմամբ, այսօր Հայաստանում տարածված են շաքարային դիաբետը եւ հիպերտոնիան: Այս սարքն անհամեմատ կիեցացնի ցանցաթաղանթի ախտորոշումները նույնիսկ այն փուլում, երբ հիվանդը օրգանիզմում դեռեւս փոփոխություն չի զգում: Համագործակցության այս օրինակը «Գրանդ հոլդինգի» հետ կարեւոր էր նաեւ այն առումով, որ ակնաբուժական կլինիկան սեփական միջոցներով սոսկ տարիներ անց կկարողանար ձեռք բերել այս սարքավորումը: Պրն Վարդանյանը հավաստիացրեց, որ գիտակցելով, որ մեր ժողովրդի ամենից մեծ ու կարեւոր ունեցվածքն առողջությունն է, նա շարունակելու է այս համագործակցությունը:

ԹԱՄԱՐ ՄԵՆԱՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ սահմանադրությունը չունի որեւէ մոդել

Հոկտեմբերի 12-ին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար **Արմեն Զալինյանը** հրավիրել էր մամուլի ասուլիս: Դա ոչ միայն Ա. Զալինյանի, այլեւ առհասարակ նախագահի աշխատակազմի ղեկավարության հետ լրագրողների առաջին համատեղ հանդիպումն էր: Մինչ այդ, պարոն Զալինյանի հավաստմամբ, տարբեր առիթներով լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ անհատական հանդիպումներ եղել են: Ա. Զալինյանը նախ ամփոփ ներկայացրեց աշխատակազմի գործունեության հիմնական բնութագրիչները:

Նրա խոսքով՝ աշխատակազմում կա 51 աշխատող: Քանի որ նախագահական շենքում է տեղաբաշխված նաեւ Ազգային ժողովը, որոշ կառույցների, մասնավորապես, նախագահի վերահսկողական ծառայության ստեղծումը դեռեւս հապաղում է: Առաջիկայում Ազգային ժողովը պետք է տեղափոխվի նոր շենք, որից հետո աշխատակազմում էլի կլինեն փոփոխություններ՝ հիմնականում թափուր տեղերի հաշվին:

Ա. Զալինյանը տեղեկացրեց, որ քաղաքացիների դիմումների 70 տոկոսը բավարարվում է՝ լուծում տալով դրանց, ծագած խնդրի օրենսդրության բացատրությամբ կամ էլ հասցեատերերին ուղղորդելով դեպի խնդրի հնարավոր լուծումը: Բողոքները հիմնականում լինում են բնակարանային, իրավական եւ աշխատատեղերի հարցերով:

Պատասխանելով լրագրողների այն հարցին, թե ինչու սահմանադրության ընդունումը ԼՂՀ-ում հապաղում է, Ա. Զալինյանն ասաց, որ սահմանադրական հանձնաժողովը հավանություն է տվել արդեն մշակված նախագծին: Նախատեսվում է առաջիկայում դրա կրճատված տարբերակը լրատվամիջոցներով փոխանցել հասարակության իրազեկմանը: Բնականաբար, պատճառ ճնշարկումներ կլինեն հասարակական շրջանակներում:

Սահմանադրության ընդունման ժամկետի առումով շատերը չէ, գտնում է Ա. Զալինյանը: ԼՂՀ սահմանադրությունը չունի որեւէ մոդել, ուստի պետք է համապատասխանեցնել այն համապարփակ իրողություններին, որոնք առկա են երկրում: Լրագրողներին հետաքրքրում էր, թե սահմանադրության հայեցակարգում սահմանվո՞ւմ են մեր պատմական տարածքները, որոնք գտնվում են ԼՂՀ իրավազորության տակ: Դրական պատասխան տալով հարցադրմանը, Ա. Զալինյանն ասաց, որ այդ կապակցությամբ կարիք կա պատմական անվանումների ճշտման: Նախատեսվում է մոտ ապագայում հրավիրել գիտաժողով՝ գիտականորեն հասկեցնելու տարածքների՝ պատմական տարբեր աղբյուրներում նշված երբեմն իրարամերժ անվանումները:

Մեկ այլ հարց վերաբերում էր մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի բացակայությանը, մանավանդ որ օմբուդսմենի մասին օրենքը Արցախում վաղուց է ընդունվել: Նախագահի աշխատակազմի ղեկավարն ասաց, որ ոչ բոլոր խնդիրներն են կարգավորված, պետք է նախ օմբուդսմենի եւ գործառնական անկախությունն օրենսդրորեն ապահովվի, որպեսզի հետագայում բախումներ չառաջանան:

Ա. Զալինյանը դժգոհեց դատաիրավական համակարգի ներկա վիճակից, նշելով, որ այս ոլորտում նախատեսվում են լուրջ բարեփոխումներ: Նրա համոզմամբ՝ անհրաժեշտ է առաջին ատյանի դատավորների թիվն ավելացնել, գերագույն դատարանում պետք է տարանջատվեն վերաքննիչ եւ վճռաբեկ ատյանները: ԼՂՀ գերագույն դատարանը պետք է ունենա միայն վճռաբեկ բողոքի ու սահմանադրական դատարանի գործառույթներ: Բացի այդ, վերաքննիչ ատյանում առաջին ատյանի դատարանի վճիռները կոլեգիալ չեն քննվում, ինչը եւս սխալ է, գտնում է Ա. Զալինյանը:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«Ջավախքում կա ներքին լարվածություն, որն անորոշության հետեւանք է»

1-ին էջից

Ախալքալաքում գործող «Վիրք» կուսակցության ղեկավար Դավիթ Ռստակյանը կարծում է, որ թուրքերի տարածումը հավանաբար Վրաստանի հատուկ ծառայությունների ձեռքի գործն է: Նա հիշեցրեց, որ Վրաստանի պետքարտուղար Գեորգի Խաինդրավան սկսում է այցելությունն Ադրբեջան, Ռուսաստան, Ուզբեկստան եւ այն երկրներ, որտեղ բնակվում են 1944 թ. Սամցխեից արտաքսված մեսխեթցի թուրքերը: Նախագահ Միխայիլ Սաակաշվիլու հանձնարարությամբ խաինդրավան պետք է տեղում ճնշարկի մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի հարցը:

«Վրաստանը պատրաստ չէ ընդունելու նրանց: Վրացիները կփորձեն հարցը տանել փակուղի եւ մեղքը կբարդեն ջավախահայության վրա, թե տեսեք, նրանք են դեմ: Այս թուրքիկներով հայության շրջանում կփորձեն հակաթուրքական տրամադրություններ ստեղծել», ասաց Ռստակյանը: Ընդհանուր առմամբ, ըստ մեր զրուցակցի, Ջավախքում իրավիճակն արտաքուստ հանգիստ է, «բայց կա ներքին լարվածություն, որը գալիս է անորոշությունից»:

Ռստակյանն ասում է, որ վրացական իշխանությունները ջավախահայությանը «ջարդելու» փորձեր են անում, սակայն հաջողության չեն հասնում: Հոկտեմբերի 5-ին Ախալքալաքում ոստիկանները գրել էին մի քանի հարյուր ցուցարարների, որոնք բողոքել էին Ախալցխայից ժամանած վրացական հարկային ծառայությունների աշխատակիցների՝ հայերին պատկանող մեկ տասնյակ խանութների փակման դեմ: Հայ ոստիկանները ռետինե մահակներով ծեծել էին ցուցարարներին, ապա եւ օդ կրակել: «Ժողովուրդը չընկճվեց, նրանք հասկացան, որ ջավախահայության ոգին դժվար է կոտրել», ասաց Ռստակյանը:

Վրաստանի նախագահն արդարացրել էր ոստիկանների բռնությունները, հիշեցրել, որ անկախությանը հաջորդած տարիներին Ջավախքում տիրել է ամենաթողությունը, եւ «այժմ մենք վերահսկողություն ենք սահմանում, ինչը նշանակում է, որ ինչ-որ փոփոխում հնարավոր են բախումներ»: Որոշ մեկնաբաններ Ախալքալաքում տեղի ունեցած բռնությունը կապում են ավելի վաղ՝ սեպտեմբերի վերջերին Ջավախքի մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպությունների՝ երկրամասի ինքնավարություն տալու պահանջների հետ:

«Վրացական իշխանությունների քաղաքականությունն է մեզ մղում ինքնավարության պահանջին: Միշտ ասել եմ, որ կարգավիճակը ջավախահայության հարցերը լուծելու ընդամենը միջոց է: Եթե այսպես շարունակվի, ժողովուրդը կարող է նաեւ անկախություն պահանջել: Ջավախահայերի հիմնական խնդիրը սոցիալ-տնտեսական չէ, ինչպես պնդում են իշխանությունները: Մենք ունենք իրավունքների դեֆիցիտ», ասաց Ռստակյանը:

Վերլուծական

Մոսկվան չարաշահում է հայ-ռուսական ռազմավարական գործընկերությունը

Ինչը Հայաստանում եւ Ղարաբաղում հակառուսական տրամադրությունների նախադրյալներ է ստեղծում

Ազգամավարական եւ ազգային հեսազոսությունների հայկական կենսոնի հունիսին անցկացած հանրային հարցումների (1500 խաղաֆացիների շրջանում) համաձայն, Հայաստանի բնակչության ավելի քան 34 տոկոսը կողմ է արտահայտվել ՆԱՏՕ-ին անդամակցությանը, մոս 34 տոկոսը՝ դեմ, 31 տոկոսը դժվարացել է պատասխանել: ՆԱՏՕ-ին Հայաստանի անդամակցությանը կողմ արտահայտվողների ավելի քան 43 տոկոսը հարցին, թե ինչո՞ւ պետք է երկիրը ինտեգրվի Հյուսիսատլանտյան դաշինքին, պատասխանել է, որ ՆԱՏՕ-ն անվտանգություն ապահովող ամենաարդյունավետ համակարգն է: Հյուսիսատլանտյան դաշինքին Հայաստանի անդամակցությանը դեմ արտահայտվողների 53 տոկոսը կարծիք է հայտնել, որ հանրաթեսությունը «պետք է Ռուսաստանի հետ շարունակի մնալ ՀԱՊԿ անդամ եւ իր անվտանգությունը կապի Ռուսաստանի հետ»:

2004 թ. աշնանը Հայաստանի խաղաֆացիների արտաքին քաղաքական կողմնորոշումները պարզելու նպատակով 1095 բնակիչների շրջանում սոցիոլոգիական հարցումներ անցկացրեց Vox populi կենսրոնը: Հարցվածների 18 տոկոսը կարծիք է հայտնել, որ արտաքին քաղաքականության մեջ Հայաստանը պետք է մերձենա «բացառապես Ռուսաստանի հետ», 20 տոկոսը՝ «ավելի շուտ Ռուսաստանի, քան ՆԱՏՕ-ի», 29 տոկոսը՝ «հավասարապես Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի», 21 տոկոսը՝ «ավելի շուտ ՆԱՏՕ-ի, քան Ռուսաստանի» եւ 8 տոկոսը՝ «բացառապես ՆԱՏՕ-ի» հետ:

Չնայած հարցումներում հայ հասարակության՝ Մոսկվայի հանդեպ որոշակի թերահավատությանը, Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ ռազմավարական հիմնական գործընկերը: Երեւանն ու Մոսկվան ռազմատեխնիկական ոլորտում սերտորեն համագործակցում են երկկողմ եւ ՀԱՊԿ շրջանակներում, Գյումրիում է տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայանը, հայ-թուրքական ու հայ-իրանական սահմանները համատեղ վերահսկում են հայ եւ ռուս սահմանապահ զորքերը:

Հայ-ռուսական առեւտրատնտեսական կապերը բավականաչափ ամուր են, թեեւ երկու երկրները չունեն ընդհանուր սահմաններ, եւ Հայաստանը Ռուսաստանի հետ կապվում է երրորդ երկրի՝ Վրաստանի տարածով: Վերջինս ունի լուրջ տարաձայնություններ Մոսկվայի հետ, ինչն ուղղակիորեն անդրադառնում է հայ-ռուսական հարաբերությունների վրա: Բավական է հիշել անցած աշնանը տեղի ունեցած Վերին Լարսի դեպքերը, երբ ռուս-վրացական սահմանի շրջափակումը ուղղակիորեն հարվածեց Հայաստանին:

2004 թ. հայ-ռուսական ապրանքաշրջանառությունը կազմել է 208 մլն դոլար: Հայաստանի անկախացումից հետո Հայաստանի գլխավոր առեւտրատնտեսական գործընկերը եղել եւ մնում է Ռուսաստանը: Մյուս կողմից, տարեցտարի նվազում է Ռուսաստանի տեսակարար կշիռը Հայաստանի արտաքին առեւտրաշրջանառության մեջ: Այսպես, եթե 2001 թ. տեսակարար կշիռը կազմել էր 19,2 տոկոս (234149.3 հազար դոլար), ապա 2002-ին՝ 17,4 (261274.7 հազար), 2003-ին՝ 15,2 (297792.3 հազար), 2004-ին՝ 12,9 (266197.2 հազար): 2004 թ. տվյալներով, Ռուսաստանին հետեւում են Բելգիան՝ 10,5, Իսրայելը՝ 9,6, ԱՄՆ՝ 8,3, Գերմանիան՝ 7,6, Մեծ Բրիտանիան՝ 5,3, Իրանը՝ 4.9, Շվեյցարիան՝ 4,1, Վրաստանը՝ 3,8 տոկոս:

Հայաստանում գրանցված են ռուսական մասնակցությամբ մոս 600 համատեղ ձեռնարկություններ, որոնցից շուրջ 300-ն արդյունավետ գործում են: ՌԱՕ ԵԷՍ-ը Հայաստանի բաշխիչ ցանցերի եւ «Սեւան-Հրազդան» կասկադի սեփականատերն է, ինչպես նաեւ Մեծամորի ատոմակայանի կառավարիչը: Ռուսաստանի կառավարության սեփականությունն է «Հրազդանի ՊՇԷԿ»-ը: Հայաստանը «երկնագույն վառելիքը» եւ ատոմակայանի համար ուրանը ստանում է բացառապես Ռուսաստանից: Ակնհայտ է Հայաստանի էներգետիկ, հետեւաբար նաեւ տնտեսական եւ քաղաքական կախվածությունը Ռուսաստանից:

Հայ-ռուսական ապրանքաշրջանառությունը, Հայաստանում ռուսաստանյան ներդրումների ծավալները կարող էին լինել ավելի լուրջ, եթե Մոսկվան գործի գցեր 2002 թ. «Գույք պարտքի դիմաց» ծրագրով ձեռք բերած հայկական ընկերությունները: Ռուսաստանը Հայաստանի պարտքի դիմաց ձեռք բերեց «Նյութաբանության գիտաարտադրական ձեռնարկությունը» (350 հազար դոլար), «Մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ-ն» (2,75 մլն), «Կառավարման ավտոմատացված համակարգեր ԳՀԻ-ն» (3,37 մլն), «Մարս» գործարանը (56,29 մլն) եւ Հրազդանի ՋԷԿ-ը (31 մլն):

Հայկական ձեռնարկությունները ստանալուց հետո ռուսական կողմը լուրջ ներդրումներ չի կատարել, ինչն առաջացնում է հայկական կողմի դժգոհությունը: Ռուսաստանը ճանաչող քաղաքագետները նշում են, որ Ռուսաստանին փոխանցված հայկական ձեռնարկությունների նման ընկերությունները Ռուսաստանում փլուզվում են եւ պետք չէ ակնկալել, որ Մոսկվան կվերականգնի եւ լուրջ ներդրումներ կկատարի հայկական ձեռնարկություններում:

Իսկ երբ փետրվարին Երեւանում էր արտգործնախարար Սերգեյ Լավրովը, դժգոհեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Պատճառն այլ էր: Հայաստանի վարչապետը հայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստվում է Իրանի հետ երկաթգծով կապվել Ադրբեջանի տարածով, մինչդեռ Հայաստանի տարածքում գործում է երկաթգծային ենթակառուցվածք, որը կարող է կապել տարածաշրջանի բոլոր երկրները:

Իրապես, Հայաստանով են անցնում Կարս-Գյումրի-Թբիլիսի, Երեւան-Նախիջեւան-Ջուլֆա երկաթգծերը, սակայն դրանք տարիներ շարունակ պարապուրդի են ենթարկվել հայտնի պատճառներով: Այնպես որ, որքան էլ ցանկանանք, հյուսիս-հարավ, այսինքն՝ Ռուսաստանը Պարսից ծոցին կապող առանցքը առայժմ չի կարող անցնել Հայաստանով: Պետք է հաշվի առնել նաեւ, որ ռուս-վրացական հարաբերությունների չկարգավորվածությունը եւս անհրապույր է դարձնում Ռուսաստանը Ծոցին կապող առանցքի անցկացումը Հայաստանով:

Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող բոլոր երկաթգծերը շրջափակված են. Կարս-Գյումրին՝ Թուրքիայի կողմից, Երեւան-Ջուլֆա-Թեհրանը եւ Երեւան-Բաքուն՝ Ադրբեջանի, Երեւան-Թբիլիսի-Սոչին՝ Վրաստանի:

Թեքում դեպի ՆԱՏՕ, ԵՄ, եվրասլանտյան կառույցներ

Պաշտոնական Երեւանը Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ ռազմակայանը համարում է Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից մեկը: Հայաստանը վերջին տարիներին հաջողությամբ շարունակում է հարաբերությունները խորացնել ՆԱՏՕ-ի հետ: Այսպես, 2004 թ. ընթացքում Հայաստանը մասնակցել է դաշինքի 47 միջոցառումների եւ 5 զորավարժությունների, իսկ 2005 թ. հայկական զինուժը մասնակցելու է ՆԱՏՕ-ի հետ համատեղ 50 միջոցառումների եւ 8 զորավարժությունների:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաապ դե Հոտսի Սխեֆերը անցյալ աշնանը՝ Երեւան այցի նախօրեին հայտարարեց. «Հայաստանն ապացուցում է, որ կարելի է սերտ հարաբերություններ պահպանել Ռուսաստանի հետ եւ միաժամանակ լինել դաշինքի ակտիվ գործընկեր: Հայաստանն իսկապես լավ կապեր ունի Ռուսաստանի հետ, սակայն դա չպետք է որեւէ կերպ խոչընդոտի ՆԱՏՕ-ի հետ նրա հարաբերությունների զարգացմանը»:

Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը վերջին տարիներին բազմիցս հայտարարել է, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը չափազանց կարեւոր է եւ համարում է Հայաստանի անվտանգության բաղկացուցիչ մասը: «Ուզում եմ մեկ անգամ եւս շեշտել, որ մենք շարժվելու ենք որդեգրած ուղղությամբ եւ շարունակաբար խորացնելու ենք մեր հարաբերությունները: Ինչ վերաբերում է Հայաստանի մասնակցությանը ՆԱՏՕ-ի տարբեր ծրագրերին, ապա ասեմ, որ մենք հնարավորությունների չափով աշխատելու ենք մասնակցել: Ավելին, եթե մենք չունենայինք չլուծված հակամարտություն, ապա հնարավորություն կունենայինք ավելի մեծ չափով մասնակցելու այդօրինակ ծրագրերին», ասել է Սարգսյանը:

Հայաստանի հետ հարաբերություններում կոսյումի փոխարեն խալաթ

Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնյաները հաճախ են Ղարաբաղի եւ Հայաստանի հասցեին վիրավորական եւ անհասկանալի հայտարարություններ անում: Շաս դեմքերում Երեւանում դրանք արձագանք չեն գտնում, չեն արվում պատասխան հայտարարություններ՝ հավանաբար հաշվի առնելով մեր երկրի փոքր լինելու եւ այլ հանգամանքներ: Վերջին մեկ տարում Կրեմլի եւ մերձկրեմլյան շրջանակների ոչ հայանպաստ ձեւակերպումները հաճախակի են դարձել: Օրինակ, մեկ տարի առաջ Բեսլանի մանկապանության օրերին Վլադիմիր Պուտինը անհասկանալի եւ վիրավորական զուգահեռ անցկացրեց Չեչնիայի եւ Ղարաբաղի միջեւ: Մի քանի ամիս առաջ Ռուսաստանի արտգործնախարարությունը դատապարտեց ԼՂ-ում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները, որոնք ժողովրդավարական չափանիշներով թերեւս ավելի ազատ էին ու արդար, քան Վլադիմիր Վլադիմիրովիչի նախագահ դառնալու երկու ընտրությունները:

Մոսկվան ԼՂ հասցեին պարբերաբար ոչ հաճելի հայտարարություններով նախադրյալներ է ստեղծում Հայաստանում եւ Ղարաբաղում հակառուսական տրամադրություններ ձեւավորելու գործում՝ ընդամենը լուրջ վնաս հասցնելով հայ եւ ռուս ժողովուրդների ավանդական բարեկամությանը: Դրա արդյունքում ենթադրվում է, որ կաճեն ամերիկյան եւ եվրասլանտյան ազդեցությունն ու համակրանքն ինչպես Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղում: Ի տարբերություն ռազմավարական գործընկեր համարվող Ռուսաստանի, որն ուղղակիորեն Երեւանին «խեղդում» էր 100 մլն դոլար պարտքի հարցում, Մ. Նահանգները տարեցտարի ավելացնում է օգնությունը ինչպես Հայաստանին, այնպես էլ միջազգային հանրության կողմից չճանաչված Ղարաբաղին:

Ռուսաստանը կարողացավ մոս 100 մլն դոլար պարտքի դիմաց սեփականացնել հայկական ռազմավարական նշանակության մի քանի ձեռնարկություններ (դրանք այսօր ըստ էության չեն գործում եւ չկան նախանշաններ, որ որեւեր շահագրգիռ են ներդրումներ կատարելու), մինչդեռ Մոսկվան «դուրս գրեց» Ռուսաստանի համար ոչ այնքան ռազմավարական գործընկեր համարվող Սիրիայի մոս 4 մլրդ դոլար պարտքը:

Կրեմլն ամեն առիթով հիշեցնում է, որ ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, չի ընդունում ԼՂ դե ֆակտո ղեկավարությանը, սակայն ջանասիրությամբ պաշտպանում է Աբխազիային, Հարավային Օսիային եւ Մերձդնեստրին, ակնհայտորեն միջամտում է այնտեղ տեղի ունեցող ընտրություններին եւ ներքաղաքական գործընթացներին: Դժվար է հիշել դեպք, երբ Մոսկվան միջազգային համաժողովների շրջանակներում պաշտպանած լինի Հայաստանի դիրքորոշումը ԼՂ հարցում:

Ռուս վերլուծաբանները հաճախ են կրկնում, որ այսօրվա Ռուսաստանն ունի երկու արտաքին քաղաքականություն՝ «կոսյումով» եւ «խալաթով»: Առաջինը ռուս դիվանագետները կրում են արտասահմանում, երկրորդը՝ ԱՊՀ տարածքում: Ռուս պաշտոնյաները Հայաստանի հետ բանակցություններում ակնհայտորեն նախընտրում են «խալաթը»: ՌԴ Պետդումայի նախագահ Բորիս Գրիզլովը Հայաստանը որակեց ընդամենը «ֆորպոս», ՌԴ Դաշնային խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովը Հայաստանի իշխանություններին հորդորեց «ըմբռնումով մոտենալ» ռուս-վրացական սահմանի շրջափակմանը (ինչի պատճառով մի քանի հարյուր Հայաստանի քաղաքացիներ անմարդկային պայմաններում շաբաթներ շարունակ մնացին Դարյալի կիրճում): Իսկ ՌԴ տրանսպորտի նախարար Իգոր Լեւիտինն իրեն Հայաստանում այնքան ազատ է զգում, որ նախորդ ասուլիսին ներկայացել էր հարբած եւ Ռոբերտ Քոչարյանին կոչեց «Երեւանի նախագահ»:

Հայաստանը վերջին տարիներին Եվրոմիության եւ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները սերտացնելու քայլերի է ձեռնարկում: Ոչ միայն կառավարության, այլեւ բնակչության արտաքին քաղաքական համակրանքները փոխվում են դեպի ԵՄ եւ ՆԱՏՕ, իրողություն, որն ընդամենը մի քանի տարի առաջ դժվար էր պատկերացնել: Հայաստանի բնակչության մի սվար զանգված հանդես է գալիս ՆԱՏՕ-ին անդամակցելու եւ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը վերջինիս մասնակցության, ինչպես նաեւ Հայաստանի ԵՄ-ին անդամակցելու օգտին: Հունիսին Հայաստանը Բրյուսելում ներկայացրեց ՆԱՏՕ-ի հետ Անհատական համագործակցության փաստաթուղթը, մինչեւ տարվա վերջը կհաստատվի Գործողությունների ծրագիրը ԵՄ-ի հետ, երկու փաստաթղթերն էլ նոր որակ են համապատասխանաբար Հայաստան-ՆԱՏՕ եւ Հայաստան-ԵՄ հարաբերություններում:

Ակնհայտորեն, Մոսկվայում մի կողմից չեն ողջունում Հայաստանի արեւմտյան, եվրոպական թեքումը, մյուս կողմից՝ շարունակում են չարաշահել հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունը: Հայաստանը օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով, առայժմ այնքան էլ մեծ հնարավորություններ չունի մանեւրելու Ռուսաստանի եւ Արեւմուտքի հետ հարաբերություններում: Ռազմաքաղաքական առումով Հայաստանում Ռուսաստանի ներկայությունը ամուր կմնա, քանի դեռ տարածաշրջանում լուրջ փոփոխություններ չեն լինի: Խոսքն առաջին հերթին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կամ սահմանի վերաբացման մասին է: Մոսկվան զուտ օբյեկտիվ պատճառներով, ակնհայտորեն, չի ցանկանա հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը: Հակառակ դեպքում ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում կդառնա ավելորդ եւ չարդարացված:

Անկախ ամեն ինչից, անցնող մեկուկես տասնամյակում Հայաստանի համար կարեւորագույն քաղաքական, ռազմական եւ տնտեսական գործընկերը եղել է հենց Ռուսաստանը: Որքան էլ մեր երկրի իշխանությունները պնդեն երկնիշ տնտեսական աճի մասին, ակնհայտ է, որ Հայաստանի հարյուր հազարավոր շարային քաղաքացիների գոյատեւման հիմնական աղբյուրը տարիներ շարունակ հենց Ռուսաստանն է, ավելի ճիշտ՝ այնտեղից փոխանցվող գումարները, որոնք մոտավորապես կազմում են այնքան, որքան պետական բյուջեն է:

ԹԱԼԱՏ ՀԱՅՈՐՅԱՆ

Սիրիայի ներքին գործերի նախարարն ինքնասպանությո՞ւն է գործել, թե՞ այլընտրանք չի ունեցել

Այլընտրանքի բացակայությունը ապանություն է ենթադրում

Հոկտեմբերի 12-ին սիրիական պաշտոնական «Սանա» լրատվական գործակալությունը հաղորդել էր, որ իր գրասենյակում սեփական ատրճանակով ինքնասպան է եղել Սիրիայի ներքին գործերի նախարար, գեներալ Ղազի Քանաանը: Ինքնասպանության դրդապատճառները հազիվ թե երբեւէ բացահայտվեն, բայց որ դա առեղծվածային է, կասկած չի հարուցում: Պարզապես լուրջ հարցադրումներ է առաջացնում՝ նա ինքնասպան եղա՞վ, թե՞ պարտադրվեց ինքնասպանության:

Քանաանի ինքնասպանության պարտադրումը համազոր է սպանության: Ինչո՞ւ: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ Ղազի Քանաանը 1982-2003 թթ. ավելի քան 20 տարի ծառայել էր Լիբանանում՝ որպես սիրիական գաղտնի ծառայությունների եւ անվտանգության ուժերի պետ: Նրան մեկ ամիս առաջ հարցաքննել էր Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով ՄԱԿ-ի հանձնաժողովը: Նա համարվում էր նախագահ Բաշար Ասադի բարեփոխումներին դիմադրող թերեւս ամենաազդեցիկ գործիչը, Իսրայելում եւ ԱՄՆ-ում հայտարարել էին Հարիրիի սպանությանը նրա մասնակցության մասին, իսկ ՄԱԿ-ի անցկացրած միջազգային քննության արդյունքներն ամփոփող զեկուցագրում տեղ էին գտել այդ հայտարարությունը հաստատող փաստեր:

Այս փաստերի առումով ուշագրավ է, որ Սիրիայի ներքին գործերի նախարարը ինքնասպանություն է գործում այն ժամանակ, երբ ՄԱԿ-ը պատրաստվում է հրապարակել Հարիրիի սպանությանն առնչվող զեկուցագիրը: Ուշագրավ է նաեւ ինքնասպանությունից մեկուկես ժամ առաջ «Լիբանանի ձայն» ռադիոկայանի թղթակցի հետ Քանաանի հեռախոսազրույցը, որի ընթացքում նա հայտնել է, որ առնչություն չունի Հարիրիի սպանությանը, 20 տարի շարունակ ծառայություններ է մատուցել Լիբանանին եւ երկրում կանխել քաղաքացիական պատերազմը, թեեւ դրա համար Սիրիան մոտ 12 հազար զոհ է տվել, սակայն լիբանանցիներն ապերախտություն են արել, ինչի հետեւանքով ինքը խիստ հիասթափված է, եւ սա իր վերջին հայտարարությունն է:

Հատկանշական է, որ մինչ «Լիբանանի ձայնի» թղթակցի հետ Քանաանի հետ հեռախոսազրույցը, CNN-ին հարցազրույց էր տվել նախագահ Բաշար Ասադը եւ մասնավորապես ասել, որ Հարիրիի սպանությանը ոչ մի սիրիացի չի մասնակցել, եթե կա մասնակցող, ապա նրա մասնակցությունը համարվելու է հայրենիքի դավաճանություն: Վերջում Բաշար Ասադն ընդգծել է. «Նա կպատժվի, եթե ոչ դրսում, ապա անպայման երկրի ներսում»:

Եթե ներքին գործերի նախարար Քանաանի ինքնասպանությանը նախորդող հեռախոսազրույցը զուգադիպում է նախագահ Ասադի CNN-ին տված հարցազրույցին, հարցազրույցն էլ միանգամայն համընկնում է Սիրիայի դեմ գործադրվող միջազգային հարձակման ճնշումների սաստկացմանն ու Դամասկոսում «նոր առաջնորդ եւ նոր վարչակարգ» հայտնաբերելու ԱՄՆ-ի որոնումներին:

«Ազգը» դեռեւս հոկտեմբերի 6-ի համարում, անդրադառնալով այդ որոնումներին, դրանք պայմանավորել էր Հարիրիի սպանությունը որպես Սիրիայի մեկուսացվածության միջոց օգտագործող ԱՄՆ-ի սպանության պատրվակով, նաեւ նախագահ Ասադին մեկուսացնելու նկրտումներով:

Բաշար Ասադի՝ CNN-ին տված հարցազրույցը, առավել եւս հայտնաբերման դեպքում Հարիրիի սպանության սիրիացի մասնակցին «եթե ոչ դրսում, ապա գոնե երկրի ներսում անպայման պատժելու» արտահայտությունը վկայում են այլընտրանքի բացակայությամբ ամերիկյան նկրտումներին տեղի տալու նրա պատրաստակամության մասին: Ըստ երեւույթին այլընտրանք չի ունեցել նաեւ Ղազի Քանաանը: Հետեւաբար նրա ինքնասպանությունն էլ անկախ այլընտրանքից, պետք է համարվի ամերիկյան վերհիշյալ նկրտումների յուրահատուկ արձագանքը, ինչպես Հարիրիի սպանությունն էր:

ՀԱՍԿՈՒ ՉԱՔԲԱՅԵՆ

Ըստ Բժեզինսկու, ԱՄՆ-ը կորցնում է առաջնորդի դերը

«Հարկավոր է դուրս գալ Իրաքից»

ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով նախկին խորհրդական, հայտնի քաղաքագետ Զբիգնեւ Բժեզինսկին Ջորջ Բուշի վարչակազմին մեղադրել է անձնասպանական քաղաքականություն վարելու մեջ, որն առաջացնում է ԱՄՆ-ի «աբխարհաքաղաքական օտարացում»:

Բժեզինսկին գտնում է, որ ԱՄՆ-ը կորցնում է համընդհանուր առաջնորդի դերը: Նրա խոսքերով, եթե ներկայիս ուղեգիծը չվերանայվի, ապա Ամերիկան կմեկուսանա քննադատական աբխարհում, խոցելի կդառնա ահաբեկիչների դեմ-հանդիման եւ ասիճանաբար կկորցնի միջազգային ազդեցությունը:

Իր կանխատեսումները Բժեզինսկին շարադրել է «Լոս Անջելես թայմսում» հրապարակած «Ամերիկյան ձախողում» հոդվածում: Նա մասնավորապես կոչ է անում հնարավորինս շուտ դուրս բերել զորքերն Իրաքից եւ դրանով իսկ վերջ դնել իսլամական աբխարհում ծավալված հակաամերիկյան տրամադրություններին:

Ըստ Բժեզինսկու, վերջերս ԱՄՆ վարչակազմն սկսել է վերանայել իր նպատակները, սակայն Բուշը չի հրաժարվում «ամբոխավարական ձեւակերպումներից, որոնք օգտագործել էր իր իսկ սանձազերծած պատերազմը 2004 թ. ընտրարշավի ժամանակ արդարացնելու համար»:

Բուշի քաղաքականությունը փաստորեն խթանում է միջուկային զենքի տարածումը: Հոդվածագրի խոսքերով, Իրանն ավելի ու ավելի է համոզվում միջուկային զենքի ստեղծման անհրաժեշտության մեջ՝ տեսնելով Իրաքի եւ ԿԺԴՀ-ի նկատմամբ ԱՄՆ-ի գործողությունների տարբերությունը: Բժեզինսկին ամերիկյան վարչակազմին մեղադրում է երկակի չափանիշների կիրառման մեջ, նշելով, որ ԱՄՆ-ը խոստացել է օժանդակել Հնդկաստանի միջուկային ծրագրի զարգացմանը:

Հայտնի քաղաքագետը կարծում է, որ վարչակազմը դեռ կարող է փոխել արտաքին քաղաքական գիծը՝ գործակցություն ծավալելով Դեմոկրատական կուսակցության կոնգրեսականների հետ: Նրա խոսքերով, Իրաքի պատերազմին վերջ դնելը եւ դեմոկրատների հետ գործակցելը Բուշի վարչակազմին թույլ կտան Մերձավոր Արեւելքում գործել ավելի լայն հայեցակարգի շրջանակներում եւ կենտրոնանալ Իրանի եւ պաղեստինա-իսրայելական հակամարտության վրա: Այդ դեպքում Ամերիկան կվերականգնի իր դիրքերը միջազգային ասպարեզում:

Ռուսաստանը տնտեսապես կպատժի անվստահելի հարեւաններին

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը Դաշնության խորհրդի դռնփակ նիստում հայտարարել է, որ երկրի գլխավոր դիվանագիտական ռեսուրսն էներգակիրներն են: Նա խոսացել է գազի, նավթի եւ էլեկտրաէներգիայի գործոնը կիրառել ԱՊՀ-ում Ռուսաստանի անվստահելի հարեւանների նկատմամբ: Լավրովի խոսքերով, կարող է գործի դրվել «տնտեսական ճնշման միջոցների ողջ բազմապիսի զինանոցը»:

Այդ մասին «Նեզավիսիմայա գազետա» թերթին հայտնել է դռնփակ նիստին ներկա եղած Դաշնության խորհրդի պատգամավորության կոմիտեի ղեկավար Վիկտոր Օզերովը: Լավրովին վկայակոչելով նա ասել է, որ գոյություն ունեցող ընդհանուր հայեցակարգը մասնավորապես ենթադրում է, որ տնտեսական համաքաղաքացիական գործակցության փոխշահավետությունը «չվնասի ռուսական նավթի ու գազի ընկերություններին»:

Ինչ վերաբերում է անվստահելի կամ անհավատարիմ հարեւաններին, նրանց հետ գոյություն ունեցող հարաբերություններում Լավրովն առանձնացրել է հետեւյալը. «Ուկրաինան, Վրաստանը, Ադրբեջանը եւ նման մյուս պետություններն ինչպե՞ս են կառուցում իրենց հարաբերությունները Եվրասլանդյան ընկերակցության հետ. գուցե ի վնա՞ս Ռուսաստանի հետ հաստատված ավանդական կապերի»:

Օզերովի խոսքերով, Լավրովն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել ԱՊՀ երկրների հետ հարաբերվելիս «համաշխարհային գներով էներգառեսուրսներ վաճառելու Ռուսաստանի պատրաստակամությանը»:

«Օրինակ, Վրաստանում գազի գների կրկնակի բարձրացումը հազիվ թե խանդավառություն առաջացնի», ասել է Լավրովը: Նրա խոսքերով, Մոսկվան որոշակի առավելություն կտա այն երկրներին, որոնք շահագրգռված են Ռուսաստանի հետ համագործակցությամբ:

Պ. Ք.

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Թուրքիան պետք է մնա հարնաբրոջ կարգավիճակում

Եվրոմիությանն անդամակցելու Թուրքիայի բանակցությունները, որոնց նա քառասուն տարի սպասում էր, վերջապես պաշտոնապես մեկնարկեցին հոկտեմբերի 3-ին: Դրանք կարող են, ինչպես դիտորդներն են մեկնաբանում, տեւել տասը տարի կամ նույնիսկ ավելի: Թուրքիայի ԵՄ-ին միանալու վերաբերյալ հայերի կարծիքները միանման չեն: Ոմանք մտածում են, որ Թուրքիայի անդամակցությունը նպաստավոր կլինի Հայաստանի համար, քանի որ այդ դեպքում Թուրքիան կլինի մշտական, խիստ հսկողության տակ եւ պարտավորված կլինի կատարել որոշ քայլեր, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության ճանաչումը, Հայաստանի շրջափակման վերացումը եւ խաղաղասիրական ու բարիդրացիական հարաբերությունների հաստատումն իր հարեւանների հետ:

Ուրիշներն էլ այն կարծիքին են, որ Թուրքիան պարզապես ձեւացնում է, թե վերափոխվում է, բայց իրականում այդպիսի մտադրություն չունի: Նրանք կասկածում են, թե «վերափոխված» Թուրքիան հակված կլինի ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Թուրքիան կարող է ԵՄ-ի անդամ դառնալ, բայց մեծ Բրիտանիայի նման դեռեւս չճանաչի Հայոց ցեղասպանությունը: Իսկ հայերն այդ դեպքում ավելի վաս վիճակում կհայտնվեն, քանի որ այլեւս պատճառաբանություններ չեն ունենա խոչընդոտելու նրա անդամակցությանը: Ավելին, ԵՄ անդամ երկրների մեջ ամենաշատ բնակչությունն ունենալով, Թուրքիան իրավունք է ստանալու ամենաշատ քվեներն ունենալու ԵՄ-ի ամենատարբեր խորհուրդներում: Այդպիսով, նա ի վիճակի է լինելու խոչընդոտելու ամեն մի հայամետ նախաձեռնություն եւ ընդհակառակը՝ նպաստելու ամեն մի թուրքամետ կամ ադրբեջանամետ բանաձեւի ընդունմանը: Այնպես որ, Թուրքիայից զիջումներ կորզելու միակ ժամանակը հիմա է, նախքան ԵՄ-ին անդամակցելը:

Կդառնա՞ Թուրքիան ԵՄ-ի անդամ, դժվար է կանխատեսել: Ոչ ոք չի կարող հաստատ նշել, թե ինչ ներքին եւ արտաքին զարգացումներ կձեւավորեն Թուրքիայի հետագա ճակատագիրը կամ եվրոպացիների վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ: Մինչ այդ սպորեւ մի քանի նկատառումներ, որոնք կարող են ազդել Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու բանակցությունների ճակատագրի վրա.

1) Թուրքիայի ներքին, սոցիալական, տնտեսական եւ քաղաքական պայմանները, որոնք կարող են ազդել արտաքին փոփոխություններ կատարելու կառավարության ցանկության վրա:

2) Հարեւան Իրաքի կայունությունը եւ դրա արձագանքները Թուրքիայում՝ քրդերի ազգային ինքնորոշման ձգտումների լույսի ներքո:

3) ԵՄ-ի անդամ տարբեր երկրների սոցիալական, տնտեսական եւ քաղաքական պայմանները: Հատկապես այդ երկրների քաղաքացիների վերաբերմունքն օտարազգի աբխատուժի ներհոսքի հանդեպ այնպիսի մի ժամանակահատվածում, երբ իրենցից շատերն են տառապում գործազրկությունից:

4) Կիպրոսի հարցի բանակցությունների արդյունքը:

5) ԵՄ-ի վրա ճնշում բանեցնելու ԱՄՆ-ի կառավարության ցանկությունը եւ կարողությունը:

6) Արտաքսական իսլամիստների ահաբեկչությունների շարունակումը հատկապես Արեւմտյան Եվրոպայի երկրներում:

7) Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ եվրոպական երկրներում հանրաքվեների արդյունքները՝ մի շարք եվրոպական երկրներում:

8) Հայ-թուրքական հարաբերությունների վիճակը, որը կապված է նաեւ դարաբաղյան հակամարտության բանակցությունների արդյունքների հետ:

Եթե հավանական է, որ Թուրքիան վերացնի Հայաստանի շրջափակումը, ապա ցեղասպանության ճանաչումը, մեր կարծիքով, դեռեւս անհավանական է: Միամտություն կլիներ հավատալ, որ Հայաստանը կարող է խոչընդոտել Թուրքիայի ԵՄ-ին անդամակցությանն այն պատճառաբանությամբ, որ այդ երկիրը չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը: Եթե մի քանի տարի անց Թուրքիան կարողանա ԵՄ-ի ներկայացրած պահանջները բավարարել եւ լուծել Կիպրոսի հիմնախնդիրը, ապա նրա անդամակցությունը երաշխավորված կլինի: Հայերս չպետք է ակնկալենք, որ եվրոպական երկրները կպաշտպանեն մեզ՝ ի հաշիվ սեփական շահերի: Նրանք այդ քայլին կդիմեն միայն եթե մեր ու իրենց շահերը համապատասխանեն:

Թուրքիայից առավելագույն զիջումներ կորզելու համար Հայաստանն ու սփյուռքը պետք է ընդհանուր լեզու գտնեն եվրոպացիների մեծամասնության հետ, որոնք դեմ են Թուրքիայի ԵՄ-ին անդամակցությանը: Թուրքիան պետք է հասկանա, որ մինչեւ Հայաստանի հետ լուրջ բանակցություններ չվարի եւ չհարթի որոշ վիճելի հարցեր, հայերը շարունակելու են իրենց անդուլ աշխատանքը՝ խոչընդոտելու նրա անդամակցությանը ԵՄ-ին: Հայերի շահերից չի բխում խանգարել կամ խոչընդոտել Թուրքիայի անդամակցությանը, բայց պետք է հնարավորինս երկարաձգել դրա իրագործումը: Ինչքան երկար տեւեն բանակցությունները, այնքան ավելի շատ զիջումներ կարելի կլինի կորզել նրանից: Հենց սա է Կիպրոսի եւ Հունաստանի դիրքորոշումը: Փոխանակ վետո դնելու բանակցություններ սկսելու վրա, այդ երկրները թույլ տվեցին, որ բանակցություններն սկսվեն, որպեսզի ընթացքում կարողանան զիջումներ ձեռք բերել: Վետոյի դեպքում նրանք այդ հնարավորությունից կզրկեին իրենք իրենց:

Հայերի շահերը պահանջում են, որ ԵՄ-ին անդամակցելու հարցում Թուրքիան մնա հարնաբրոջ կարգավիճակում այնքան ժամանակ, քանի դեռ մերժում է իր հետ բերել պարտադիր օժիտը:

ՀԱԲՈՒԹ ՄԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆորնիա կուրիեր»

Բուշի վարկանիշն աննախադեպ իջել է

Ամերիկացիների 54 տոկոսը դժգոհ է նախագահ Ջորջ Բուշի գործունեությունից: Այդ են վկայում NBC հեռուստաընկերության եւ «Ուոլ սթրիթ ջոռնալ» թերթի հարցման տվյալները: Բուշի աշխատանքին հավանություն է տալիս ԱՄՆ բնակչության ընդամենը 39 տոկոսը:

Սա Բուշի ամենացածր վարկանիշն է նրա նախագահության 5 տարիներին: Բնակչության առանձին խմբեր առհասարակ չեն վստահում Բուշին: Այսպես, նրա աշխատանքը դրական է գնահատում սեւամորթ ամերիկացիների միայն 2 տոկոսը:

Ամերիկացիներն ընդհանուր առմամբ դժգոհ են երկրի իրավիճակից: 59 տոկոսի կարծիքով, ԱՄՆ-ը «շարժվում է սխալ ուղղությամբ»: Հակառակ կարծիքին է ընդամենը 28 տոկոսը: Իրաքի, ԱՄՆ տնտեսական վիճակի եւ փոթորիկների հետեւանքների վերացման հարցերում հոռետեսություն է տիրում:

Բնակչությունը դժգոհ է նաեւ Բուշի քաղաքական դաշնակիցներից եւ կուսակիցներից: Կոնգրեսի ընտրություններից մեկ տարի առաջ հարցման մասնակիցների 48 տոկոսն արտահայտվում է օրենսդիր մարմնում դեմոկրատների գերիշխանության հաստատման օգտին: Կառավարող հանրապետականներին պաշտպանում է ամերիկացիների 39 տոկոսը:

Պ. Ք.

Ֆրանսահայ նկարիչ Ասատուրը առաջին անգամ Հայաստանում

Ֆրանսահայ նկարիչ Ասատուր Պզտիկյանն այսօր փնտրված արվեստագետներից մեկն է աշխարհում՝ էսթետիկայի, գեղանկարչության հանդեպ ունեցած վերաբերմունքի խիստ ինքնատիպությամբ, արվեստագետի ներքին կառուցվածքով, մարդկային իդեալների նախնական անաղարտությամբ եւ առհասարակ իր անհատականության շեշտվածությամբ:

Տարիներ է արդեն, որ նրա արվեստի հանդեպ աշխարհում հետաքրքրությունների լայն շրջանակ է գծագրվել: Փարիզում բնակվող նկարիչը բազմաթիվ անհատական եւ հավաքական ցուցահանդեսներ է ունեցել Ֆրանսիայում, Ամստերդամում, Գերմանիայում, Լոզանում, Հռոմում, Վիչենզայում, Տոկիոյում, Լիմայում (Պերու), Թայվանում, տասնյակ անգամներ իր ծննդավայրում՝ Բեյրութում եւ այլուր:

Վերջերս Փարիզում լույս տեսավ Ասատուրի գեղանկարների ալբոմը՝ արվեստի հայտնի եվրոպական տեսաբանների ծավալուն եւ բազմաբնույթ ուսումնասիրություններով: «Գաղտնագրության իշխանը», «արքնացած երազողը» արվեստաբանների այս բնութագրումները կարելի է վերագրել Ասատուրի արվեստի խորհրդավորությանը, որն ասես վերադարձ է հին աշխարհի մարդուն ու նրա ստեղծած արխայիկ արվեստին, երբ մարդն իր նախնական վիճակների տրավորություններն աշխարհի մասին արտահայտում էր պարզ թվացող պատկերագրերով՝ ժայռերին ու քարայրներին՝ խորհրդավորության հանելուկը թողնելով սերունդներին:

«Ծագումով կիլիկեցի, Ասատուրն ամենից առաջ միջերկրացի է, ծովային ինչ-որ բան կա նրա մեջ, գոյության էմիկուրյան զգացողություն, կարգուկանոնի եւ էականի ճաշակ, նախընտրություն բեկված գույների, զոհաբերման լույսի նկատմամբ, որի վրա հանգչում են հանգիստ պարզությունը եւ հարաբարժ ուշիմությունը. եւ այս ամենը պարփակված անհանգիստ ձգողականությամբ»:

Առաջին անգամ Ասատուր Պզտիկյանը Երեւանում էր, 2 օր առաջ վերադարձավ Փարիզ: Մեր հրավերով աշխարհահռչակ նկարիչն այցելեց խմբագրություն եւ զրույց ունեցավ: Որքան էլ իր առաջին այցին մամուլում հանդես գալը գեղանկարիչը համարում էր անպատեհ, այնուամենայնիվ, ընդունեց մեր հարցազրույցի հրավերը: Նկարչության, իր զգացողությունների, հետաքրքրությունների մի անսովոր աշխարհ է բացում Ասատուրը, որի հետ ընթերցողը կարող է ծանոթանալ՝ հետեւելով «Ազգի» հաջորդ մշակութային ներդիրի էջերին:

ՄԵԼԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

ՖՈՏՈԱԼԲՈՄ

«Մեր երկիրը չտեսնված է վերեւից»

Համոզված է լուսանկարիչ Հրայր Բազեն

Կանադահայ լուսանկարիչ Հրայր Բազեն 1992 թ.-ից հաճախ է եղել Հայաստանում, իսկ Հայաստանին, Արցախին եւ Արեւմտյան Հայաստանին նվիրված առաջին նկարները սկսել է ֆիքսել 1995թ.-ից: Հետագայում այդ լուսանկարները դարձել են ալբոմներ, որոնցում ներկայացված լուսանկարները հայրենի հողի եւ բնության, հոգեւոր հուշակոթողների մասին են: Հրայր Բազեն այս տարի Հայաստանում հրատարակել եւ հանրությանն է ներկայացրել լուսանկարների 2՝ «Երկիր» եւ «Ճախրող բազե» ալբոմները: 256 էջով, 460 նկարներով «Երկիր» ֆոտոալբոմը ներկայացնում է Արեւմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառները:

Երեկ ներկայացվեց լուսանկարչի նոր՝ «Ճախրող բազե» ֆոտոալբոմը, ուր 160 էջով, գրեթե նույնքան նկարներով Հայաստանի ու Ղարաբաղի պատկերներն են ընդգրկվում: Ալբոմի հետաքրքրությունն այն է, որ Հրայր Բազեի ֆիքսած բոլոր նկարներն արվել են վերեւից՝ ուղղաթիռով: «Մեր երկիրը չտեսնված է վերեւից», նշում է ալբոմի հեղինակը եւ հավելում, որ 95 թ.-ից հավաքված լուսանկարներով ալբոմում Ղարաբաղն ու Հայաստանը ներկայացված են միասին. «հայրենիքը չի կարելի սահմանների բաժանել»:

Օդանավորդի մասնագիտությանը տիրապետող լուսանկարիչը հրվանտով էր պատմում ուղղաթիռով կատարած իրենց ճանապարհորդությունների մասին, որոնց արդյունքում ստացված նկարներն արտակարգ հետաքրքրական էին: Օրինակ, հարթավայրային մի տեսարան հեղինակն անվանել է Արիլ Գորկի եւ մեր «ինչո՞ւ Գորկի» հարցին պատասխանեց. «Երբ թռչում էինք այդտեղով, զգացողություն ունեցա, թե թռչում ենք Արիլ Գորկու այն կտավներից մեկի վրայով, որը ես տեսել էի Նյու Յորքում»:

Տարբեր տարիներին լուսանկարչի նախաձեռնությանը օգնել են Վազգեն Սարգսյանը, Մեսրոպ սրբազանը, իսկ վերջին ալբոմի նկարահանումների համար օգնել է Սերժ Սարգսյանը: Հեղինակի խոսքերով, 1995 թ.-ից արված որոշ նկարներ չեն ընդգրկվել «Ճախրող բազե» ալբոմում: Օրինակ, փոխվել է Դաղիվանքի լուսանկարը՝ վանքի նոր, վերակառուցված տարբերակով: Նկարիչ Հակոբ Հակոբյանի խոսքերով, շատ էլ չեն առիթ ունենում իրենց երկիրը վերեւից տեսնելու, իսկ աղավնու բարությամբ եւ բազեի սուր աչքով օժտված նկարչի այս ալբոմը ընձեռում է այդ հնարավորությունը: Ուշագրավ է նաեւ աշխարհում սփռված հայկական եկեղեցիներն ու հուշարձանները նկարելու (ոչ վերեւից) հեղինակի նախաձեռնությունը: Նա նկարել է 43 երկրներում սփռված հայկական եկեղեցիները եւ այժմ պատրաստվում է նոր ալբոմի հրատարակությանը:

ԳՈՌՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Օտարագիր հայ գրողների առաջին համաժողովը խիստ օգտակար էր

Օտարագիր հայ գրականությունն այսօր թե՛ աշխարհագրական եւ թե՛ լեզվական առումով մի մեծ շերտ է կազմում արտերկրում: Իսպանագիր, անգլիագիր, իտալագիր, ֆրանսագիր եւ այլ լեզուներով ստեղծագործող մեր հայրենակիցները, որոնք ճակատագրի բերումով կորցրին իրենց նախնիների հայրենիքը, նաեւ կորցրին մայրենի լեզուն: Եվ ահա առաջին անգամ Հայաստանի գրողների միությունը նախաձեռնեց համաժողով: Ինչպես նշեց ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, «այս համաժողովով փորձում ենք մեր հայրենակիցներին եւ հայրենիքն իրար կապել, տեր կանգնել այն գրականությանը, որ նրանք ստեղծել են, մանավանդ մեզ մտահոգում է ազգային ճակատագիրը եւ «օտարագիր հայ գրականությունը» թեման»:

Համաժողովի մասնակիցներին հայ գրերի գյուտի 1600-ամյակի եւ Թարգմանչաց տոնի առիթով Մայր աթոռ Սբ. Էջմիածնում ընդունեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը: Վեհափառ հայրապետը, ողջունելով հյուրերին, նշեց. «Մեր հոգին մխիթարություն է ապրում, որ դուք քարոզիչներ, առաքյալներ եք դարձել, ծառայեցնելով ձեր՝ գրողի շնորհը եւ ձեր միտքն արտահայտում եք ի լուր աշխարհի»: Վեհափառի օրհնությունը ստանալուց հետո հյուրերն այցելեցին վեհարանի թանգարան, խոնարհվեցին ոսկյա տառերի առջեւ եւ մեկնեցին Օտական: Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մասնակցելով Սբ. պատարագին, գրողները ծնկի իջան Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի առջեւ ու դպրատանը շարունակեցին իրենց ճնարկումները: Լավագույն թարգմանության համար ամենամյա «Կանթեղ» մրցանակը շնորհվեց Հակոբ Մովսեսին եւ Սիմադ Նուրիզադեին: Քիչ անց եկեղեցու բակում գրողները մասնակցեցին Վեհափառ հայրապետի ձեռամբ թռչնագիր տուֆե տառերի օրհնության արարողությանը, այցելեցին Մուղնու եկեղեցի:

Գրողները երկուշաբթի ԳԱԱ դահլիճում շարունակեցին առաջին համաժողովի աշխատանքները, որի ընթացքում 15 երկրներից ժամանած 20 գրողները, գրականագետները մանրամասն ներկայացրին սփյուռքի տարբեր գաղթօջախներում գրականության, թատրոնի ու ցեղասպանության հարցերին վերաբերող գրականագիտական աշխատանքները եւ հեղինակներին:

Հաջորդ երկու օրերին Ծաղկաձորում օտարագիր հայ գրողները երկու օրվա ընթացքում հնարավորություն ունեցան մոտիկից շփվելու իրար հետ, փոխանակելու գրքեր եւ խոսելու պրոբլեմների ու դժվարությունների մասին:

Համաժողովի ավարտին փորձեցի կարծիքներ հավաքել, թե ինչ տվեց այդ հավաքը եւ ինչ ակնկալիքներ ունեին օտարագիր հայ գրողները: Բոլոր զրուցակիցներս միանշանակ կարտահայտեցին եւ հաջողված էին համարում անդրանիկ համաժողովը, որը կարծես թե ե՛ւ ճանաչողական, ե՛ւ տեղեկատվական բնույթ կրեց:

Արամ Արքուն («Արարատ» պարբերականի խմբագիր)- Սա մի առիթ էր, որով հնարավորություն ստեղծվեց ծանոթանալու աշխարհի օտարագիր հայ գրողների հետ, եւ այս շփումները ներշնչման աղբյուր եղան: Հրաշալի էր կազմակերպված, ու, կարծում եմ, հնարավորություն ստեղծվեց, որ օտար երկրներում ապրող եւ օտար լեզվով ստեղծագործող հայ գրողների գործերը նաեւ մեր պարբերականի էջերում հայտնվեն:

Ալֆրեդ Գ. Մյուլլերն ամերիկացի է, դասախոսում է Երեւանի Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում: Նա նշեց. «Առիթը, որ մեզ տվեց ծանոթանալու հայկական համայնքների գրականությանը ու ստեղծեց մի նոր կամուրջ, որով մեկս մյուսին կարող ենք օգնել, պարզապես անգնահատելի էր: Կազմակերպիչները պետք է ջանան, որ այս կաթը պահվի ու զարգանա»:

Ռուբինա Փիրումյան (Լոս Անջելես)- Շատ բարձր եմ գնահատում համաժողովը եւ իր այս օրերի աշխատանքները, մանավանդ որ օտարագիր գրողներ էին հատկապես հրավիրված: Ուրախալի է, որ գեղարվեստական գրականություն ստեղծողներն են այս համաժողովում, եւ ես հավատում եմ, որ գեղարվեստական ստեղծագործություններն իրենց ուժով ու հնարավորություններով կարող են շատ ավելի մեծ աշխատանք կատարել ցեղասպանության ճանաչման տեսակետից՝ հասարակական կարծիքի ձեւավորման տեսանկյունից, քան որեւէ փաստագրություն, պատմագրություն...

Օշին Քեշիշյան («Արմինյն օբզերվեր» թերթի խմբագիր, ԱՄՆ)- Ինձ համար այս համաժողովը կարեւոր է նրանով, որ բացի Ամերիկայում եղած օտարագիրներից, այլ երկրների գրողների մասին տեղեկացանք: Այս համաժողովը լավագույն առիթ հանդիսացավ ճանաչողական, բացատրողական, քան որակական առումով: Եվ այսօր որակի մասին չէ խոսքը, այլ՝ Ամերիկայում 50-ից ավելի երիտասարդ գրողներ, որոնք հրավիրված էին, չկարողացան գալ այլ եւ այլ պատճառներով... Եվ այս հավաքի ընթացքում, կարծում եմ, կգտնվեն նման հարցերի լուծումները:

Լեւոն Հովսեփյան (Մոսկվա)- Գնահատում եմ նման համաժողովը եւ, կարծում եմ, վաղուց հասունացել է այն պահը, որ պետք է ստեղծվի համընդհանուր տեղեկատվական հրատարակություն կամ էլ շատ ավելի ճիշտ կլինի ստեղծել համընդհանուր հայկական համացանց:

Զոյա Փիրզադ (Պարսկաստան)- Սքանչելի էր համաժողովը, բայց, կարծում եմ, մի քանի ամիս պիտի անցնի, որ հասկանամ, թե ինչ հետք թողեցին ինձ վրա այս կարճատեւ հավաքն ու ճնարկումները:

Եթե ես մինչեւ հիմա գրում էի պարսկերեն, այժմ հույս ունեմ, որ հաջորդ համաժողովին կգամ հայերեն գրված գործով: Ասեմ, որ առաջին բանաստեղծությունները գրել եմ 7-8 տարեկանում հայերեն ու վերջ: Հույս ունեմ, որ շուտով իմ վերջին՝ «Լույսերը ես եմ հանգցնելու» վեպը կթարգմանվի հայերեն:

Գիվի Շախնազար (Վրաստան)- Ես հայ եմ, բայց գրում եմ վրացերեն: Այս համաժողովը մեզ համար շատ կարեւոր է ու արժեքավոր: Ոմանք գրում են շատ թույլ, բայց հեղինակություն են ձեռք բերում, իսկ հրաշալի գործեր ստեղծողները մնում են ստվերում: Ահա այս առիթը մեզ մտերմացրեց ու համագործակցելու հնարավորություն տվեց:

Մկրտիչ Մարկոսյան (Թուրքիա)- Անչափ կարեւորում եմ այս հավաքը, որն իր կարեւոր հետքը կթողնի հենց հայ գրականության վրա: Եվ մի բան պետք է լավ հասկանանք, որ կարեւոր է, թե ինչ է գրվում, այլ ոչ թե՝ ինչ լեզվով:

Երվանդ Ազատյան (Դեսրոյթ)- Այս կարեւոր համաժողովը, որ նախաձեռնել է Լեւոն Անանյանը, մեզ մտորելու տեղիք է տալիս, որ այս ընթացքում սահմանենք, թե ով է հայ գրողը: Աշխարհով մեկ տարածված հայերեն լեզվով գրո՞ղն է հայ գրող, թե օտարալեզու գրողը: Այս հարցումը ողջունելի է իր նախաձեռնությամբ: Ես այստեղ բազմաթիվ գրողների աշխատանքներին ծանոթացա Իտալիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Թուրքիայից եւ այլ վայրերից: Կարծում եմ, մեր հիմնական նպատակը պիտի լինի հայ գրականության զարգացումն ու տարածումն ամբողջ աշխարհում՝ ինչ լեզվով էլ որ այն լինի: Այժմ Ամերիկայում շատ երիտասարդ գրողներ կան, եւ նրանց հետ պետք է անպայման աշխատանքներ տարվի: Առաջիկայում, երբ կգումարվի հաջորդ համաժողովը, հարկ է, որ մասնակիցները նախապես ներկայացնեն իրենց ելույթները, ու դրանք ճնարկի ընտրված մի խումբ, որպեսզի համաժողովն իր բուն նյութից չշեղվի, այլ կենտրոնանա իր անելիքների վրա:

Լիագումար նիստերի եւ ճնարկումների ընթացքում եղան նաեւ երկու տասնյակ գրքերի շնորհանդեսներ թե՛ օտար, թե՛ հայերեն լեզվով: Իսկ ամենաարժեքավորն այդ գրքերից Հակոբ Խաչիկյանի եռահատոր հայ գրականության անթոլոգիան էր՝ սկսած հեթանոսական շրջանից մինչեւ մեր օրերը:

Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանն ամփոփելով համաժողովի աշխատանքները նշեց. «Այս համաժողովով մենք մի կարեւոր խնդիր ենք լուծում՝ ճանաչել միմյանց, գնահատել միմյանց եւ ստեղծել պայմաններ, որպեսզի օտարագիր հայ գրողն իրեն զգա նույնքան մեր երկրի, մեր մշակույթի տերը, ինչքան էլ որ ճակատագրի բերումով օտարվել է, որքան մենք: Ես կարծում եմ, որ շատ կարեւոր է մեր հաջորդ քայլը՝ թարգմանաբար ներկայացնել բոլոր այն գրքերը, որոնք այսօր ստեղծվում են արտերկրում: Հաճախ այդ ստեղծագործություններն ավելի շատ թարգմանվում են այլ լեզուներով, քան մենք հասցնում ենք հայերեն թարգմանել: Վստահ եմ, որ այս համաժողովները պիտի դառնան ավանդական ու հաջորդին մասնակցեն օտարագիր երիտասարդ գրողները, եւ պիտի ամեն ինչ անենք նրանց չկորցնելու համար, որոնք արտերկրում մեր Հայ դատի ու պահանջատիրության քարոզչիներն պիտի լինեն: Իսկ որ կարեւորն է՝ արդեն արված է սփյուռքի օտարագիր գրողների գրական գույքագրումը, եւ պիտի կարողանանք հնարավորինս ներկայացնել նրանց ստեղծագործությունները մեր ընթերցողին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Եվրոպական 11 հավաքականներ եզրափակիչում են

Ավարտվեց ֆուտբոլի աշխարհի առաջնության եվրոպական գոտու ընտրական մրցաշարը: Եվրոպայում խաղարկվող 14 ուղեգրերից 11-ի տերերն արդեն հայտնի են: 2006 թ. ամռանը Գերմանիայում կայանալիք աշխարհի առաջնությունում հանդես կգան կազմակերպիչ երկրի, Հոլանդիայի, Ուկրաինայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի, Լեհաստանի, Սերբիայի, Խորվաթիայի, Շվեդիայի հավաքականները: Եվս 3 ուղեգիր նոյեմբերի 12-ին եւ 16-ին կայանալիք անցումային խաղերում կվիճարկեն Չեխիայի, Թուրքիայի, Սլովակիայի, Շվեյցարիայի, Նորվեգիայի, Իսպանիայի հավաքականները, որոնք այսօր Ցյուրիխում կայանալիք վիճակահանությամբ զույգեր կկազմեն:

Եվրոպական գոտու ընտրական մրցաշարի ավարտական տուրը տվեց հուզող բոլոր հարցերի պատասխանները: 1-ին խմբում Չեխիայի հավաքականը միայն ֆիններին նկատմամբ հաղթանակի դեպքում կարող էր 2-րդ տեղը գրավել, որին հավակնում էին նաեւ ռումինացիները: Հետաքրքրական է, որ ֆիններին շահագրգռելու յուրօրինակ առաջարկ էր արել ռումինական Կրայովա քաղաքի քաղաքապետը: Նա խոստացել էր քաղաքի մի քանի փողոցներ ֆինն ֆուտբոլիստների անունով անվանակոչել, եթե ֆինները չպարտվեն չեխերին, ինչը հնարավորություն կտար ռումինացիներին մտնելու եզրափակիչ: Սակայն անվանափոխության կարիք չի լինի, քանի որ չեխերը համոզիչ հաղթանակ տոնեցին (3-0): Այս խմբի Հոլանդիա-Մակեդոնիա խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 0-0:

2-րդ խմբում 2-րդ տեղի համար պայքար էր ընթանում Թուրքիայի եւ Դանիայի հավաքականների միջեւ: Երկուսն էլ հյուրընկալվելիս հաղթեցին: Թուրքերն առավելության հասան Ալբանիայի հավաքականի նկատմամբ (1-0), իսկ դանիացիները պարտության մատնեցին ղազախներին (2-1): Թուրքիայի ընտրանին իրավունք ստացավ մասնակցելու անցումային խաղին:

Ընտրական 3-րդ խմբում Ռուսաստանի հավաքականին չհաջողվեց մրցակցի դաշտում հաղթել Սլովակիայի ընտրանուն (0-0) եւ զրկվեց ուղեգիրը նվաճելու հնարավորությունից: Խաղից հետո մրցակիցների քանատների միջեւ ծեծկռտուքի հետեւանքով, որին մասնակցել էր մոտ 80 մարդ, մի քանիսը մարմնական վնասվածքներ էին ստացել: Ոստիկանությունը ձերբակալել էր միջադեպի մասնակիցներից շատերին, հետագայում նրանց ազատ էին արձակել:

Պորտուգալիայի հավաքականի հարձակվող Պաուլետան 2 անգամ գրավելով լատվիացիների դարպասը՝ գերազանցեց հանրաճանաչ էյ-սեբիոյի ռեկորդը: Վերջինս 1961-73 թթ. հավաքականում անցկացրած 64 խաղում խփել էր 41 գոլ: 1997 թ. իր նորամուտը հավաքականում նշած Պաուլետան 77 խաղում դարձել է 42 գոլի հեղինակ:

Ֆրանսիայի հավաքականը ջախջախելով Կիպրոսի ընտրանուն (4-0), եզրափակիչի ուղեգիր նվաճեց: Իսկ ահա շվեյցարացիները ոչ-ոքի (0-0) խաղալով իռլանդացիների հետ, ստիպված բավարարվեցին 2-րդ տեղով: Թեեւ 7-րդ խմբում իսպանացիներն ավելի խոշոր հաշվով հաղթանակ տոնեցին Սան Մարինոյի նկատմամբ (6-0), սակայն դա բավարար չէր եզրափակիչ մտնելու համար: Խմբի հաղթող դարձավ Սերբիայի ընտրանին, որը 1-0 հաշվով հաղթեց Բոսնիայի հավաքականին: Այդ խաղից հետո էլ երկրպագուների միջեւ ծագած ընդհարման պատճառով 17 ֆանատներ տեղափոխվել են հիվանդանոց, որոնցից 6-ի վիճակը ծանր է: Մեծ հետաքրքրություն էր առաջացրել 6-րդ խմբի առաջատարներ Անգլիայի եւ Լեհաստանի մրցավեճը, միայն երկուսն էլ արդեն եզրափակիչ էին նվաճել: Առյուծաձի ուղեգիր էին նվաճել: Արդյունքն վեց էր առաջին խաղակեսի վերջին րոպեն: Նախ Մայքլ Օուենը բացեց հաշիվը, ապա Ֆրանկովսկին վերականգնեց հավասարակշռությունը: Անգլիացիներին հաղթանակ պարգեւեց խաղավարից 10 րոպե առաջ Լեմփարդի խփած գոլը:

Ընտրական մյուս հանդիպումներում գրանցվել են հետեւյալ արդյունքները. Հունաստան-վրաստան՝ 1-0, Լյուքսեմբուրգ-Էստոնիա՝ 0-2, Իտալիա-Մոլդովա՝ 2-1, Սլովենիա-Շոտլանդիա՝ 0-3, Բելառուս-Նորվեգիա՝ 0-1, Ուելս-Ադրբեջան՝ 2-0, Ավստրիա-Հս. Իռլանդիա՝ 2-0, Լիտվա-Բելգիա՝ 1-1, Հունգարիա-Խորվաթիա՝ 0-0, Շվեդիա-Իսլանդիա՝ 3-1, Մալթա-Բուլղարիա՝ 1-1:

Մրցաշարային աղյուսակներ

1-ին խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հոլանդիա	12	10	2	0	27-3	32
2. Չեխիա	12	9	0	3	35-12	27
3. Ռումինիա	12	8	1	3	20-10	25
4. Ֆինլանդիա	12	5	1	6	21-19	16
5. Մակեդոնիա	12	2	3	7	11-24	9
6. Հայաստան	12	2	1	9	9-25	7
7. Անդորրա	12	1	2	9	4-34	5

2-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ուկրաինա	12	7	4	1	18-7	25
2. Թուրքիա	12	6	5	1	23-9	23
3. Դանիա	12	6	4	2	24-12	22
4. Հունաստան	12	6	3	3	15-9	21
5. Ալբանիա	12	4	1	7	11-20	13
6. Վրաստան	12	2	4	6	14-25	10
7. Ղազախստան	12	0	1	11	6-29	1

3-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պորտուգալիա	12	9	3	0	35-5	30
2. Սլովակիա	12	6	5	1	24-8	23
3. Ռուսաստան	12	6	5	1	23-12	23
4. Էստոնիա	12	5	2	5	16-17	17
5. Լատվիա	12	4	3	5	18-21	15
6. Լիխտենշտեյն	12	2	2	8	13-23	8
7. Լյուքսեմբուրգ	12	0	0	12	5-48	0

4-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ֆրանսիա	10	5	5	0	14-2	20
2. Շվեյցարիա	10	4	6	0	18-7	18
3. Իսրայել	10	4	6	0	15-10	18
4. Իռլանդիա	10	4	5	1	12-5	17
5. Կիպրոս	10	1	1	8	8-20	4
6. Ֆարերներ	10	0	1	9	4-27	1

5-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իտալիա	10	7	2	1	17-8	23
2. Նորվեգիա	10	5	3	2	12-7	18
3. Շոտլանդիա	10	3	4	3	9-7	3
4. Սլովենիա	10	3	3	4	10-13	12
5. Բելառուս	10	2	4	4	12-14	10
6. Մոլդովա	10	1	2	7	5-16	5

6-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Անգլիա	10	8	1	1	17-5	25
2. Լեհաստան	10	8	0	2	27-9	24
3. Ավստրիա	10	4	3	3	15-12	15
4. Հս. Իռլանդիա	10	2	3	5	10-18	9
5. Ուելս	10	2	2	6	10-15	8
6. Ադրբեջան	10	0	3	7	1-21	3

7-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Սերբիա	10	6	4	0	16-1	22
2. Իսպանիա	10	5	5	0	19-3	20
3. Բոսնիա	10	4	4	2	12-9	16
4. Բելգիա	10	3	3	4	16-11	12
5. Լիտվա	10	2	4	4	8-9	10
6. Սան Մարինո	10	0	0	10	2-40	0

8-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Խորվաթիա	10	7	3	0	21-5	24
2. Շվեդիա	10	8	0	2	30-4	24
3. Բուլղարիա	10	4	3	3	17-17	15
4. Հունգարիա	10	4	2	4	13-14	14
5. Իսլանդիա	10	1	1	8	14-27	4
6. Մալթա	10	0	3	7	4-32	3

Երիտասարդներն ավարտեցին մրցավեճը

Ֆուտբոլի Եվրոպայի երիտասարդական առաջնության 1/8 եզրափակիչի ուղեգրերը վիճարկող հավաքականներն ավարտեցին իրենց մրցավեճն՝ ի հայտ բերելով պայքարը շարունակող 16 ուժեղագույններին: Ընտրական առաջին խմբում, որտեղ հանդես էր գալիս նաեւ Հայաստանի երիտասարդական հավաքականը, պայքարը շարունակելու իրավունք ստացան Հոլանդիայի եւ Չեխիայի հավաքականները: ՀՀ հավաքականը վերջին տուրում ազատ էր, քանի որ Անդորրայի երիտասարդական հավաքականը չի մասնակցում մրցաշարին: Խմբի հաղթող դարձան հոլանդացիները, որոնք սեփական հարկի տակ հաղթեցին մակեդոնացիներին (4-0): 2-րդ տեղը զբաղեցրին չեխերը՝ առաջադիմելով ֆիններին նկատմամբ (3-1):

2-րդ խմբից պայքարը կշարունակեն Դանիայի եւ Ուկրաինայի հավաքականները: Յուրօրինակ նվաճման հասան Պորտուգալիայի երիտասարդական հավաքականի ֆուտբոլիստները, որոնք անցկացրած բոլոր 10 խաղերում էլ հաղթեցին մրցակիցներին: Պատվավոր մրցանակի համար պայքարը կշարունակեն նաեւ Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Սլովենիայի, Գերմանիայի, Անգլիայի, Բելգիայի, Սերբիայի, Խորվաթիայի եւ Հունգարիայի հավաքականները:

Թեյլորը հրաժարվեց IBF-ի տիտղոսից

Միջին քաշում պրոֆեսիոնալ բոնցֆամարտի աշխարհի բացարձակ չեմպիոն Ջերմեն Թեյլորը պաշտոնապես հրաժարվել է IBF-ի վարկածով չեմպիոնի տիտղոսից: Նշենք, որ նրան էին պատկանում պրոֆեսիոնալ բոնցֆամարտում խաղարկվող բոլոր չորս վարկածներով աշխարհի չեմպիոնի տիտղոսները, ինչը յուրօրինակ նվաճում է: Հրաժարականի պատճառն այն է, որ Թեյլորը պատրաստ չէ նշված ժամկետում IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը պաշտպանել Սեմ Սոլիմանի հետ նախատեսված մենամարտում: Բացի այդ, Թեյլորը ցանկանում է կրճատել բոնցֆամարտի տարբեր կազմակերպություններին իրեն հասանելիք հոնորարներից կատարվող վճարումների չափը: Ըստ գործող կարգի, յուրաքանչյուր մենամարտից ստանալիք հոնորարի 3 տոկոսը Թեյլորը պարտավոր է վճարել համապատասխան կազմակերպությանը, որի վարկածով չեմպիոնի տիտղոսը կրում է: Իսկ քանի որ Թեյլորը չորս կազմակերպության չեմպիոն է, ապա վճարում էր 12 տոկոս: Հրաժարվելով IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսից, այժմ Թեյլորը միայն հոնորարի 9 տոկոսը կկորցնի:

Ներկայում բոնցֆամարտիկը պարգեւատրվում է Բեռնարդ Հոպկինսի հետ նոր մենամարտին եւ հույս ունի ռեւանշի հասնել վերջինից կրած պարտության դիմաց:

Չիրացված 11 մ հարվածի տարբեր հետեւանքները

Կամերունի հավաքականի ֆուտբոլիստներին չհաջողվեց ֆուտբոլի աշխարհի առաջնության եզրափակիչի ուղեգիր նվաճել՝ այդ իրավունքը զիջելով Կոտ դ'Իվուարի ֆուտբոլիստներին: Վերջին խաղում կամերունցիներին եգիպտոսի հավաքականի հետ խաղում հաղթանակ էր անհրաժեշտ, սակայն հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի: Ընդ որում ավելացված ժամանակում կամերունցիները ստացան 11 մ հարվածի իրավունք, սակայն Պիեռ Վոմեն չկարողացավ դիպուկ իրացնել հարվածը: Այդ վրիպումը ճակատագրական եղավ ոչ միայն Կամերունի հավաքականի համար, որը զրկվեց աշխարհի առաջնությունում հանդես գալու իրավունքից: Կամերունցի ֆուտբոլասերները ոչ մի կերպ չէին կարող ներել ֆուտբոլիստին նման վրիպման համար եւ հատուցումը չուշացավ: Նրանք քարուքանդ արեցին Վոմեի բնակարանը: Բարեբախտաբար, ֆուտբոլիստն ու նրա ընտանիքը չտուժեցին:

Միլանի «Ինտերում» հանդես եկող կամերունցի ֆուտբոլիստը կանխագուշակում էր, որ իր հետ կարող է նման բան պատահել, եթե չիրացնի 11 մ հարվածը: Ուստի խաղից հետո հանդերձարան ուղեւորվելիս ոստիկաններին զգուշացրել էր հսկողության տակ առնել իր բնակարանն ու հարազատներին: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Վոմեն տեղեկացրել է, որ երբ մրցակցի դարպասին 11 մ հարված նշանակվեց, խաղընկերներից ոչ մեկը չէր ուզում մոտենալ գնդակին ու իրացնել տուգանայինը՝ զգուշանալով հնարավոր հետեւանքներից: Վոմեն ճնշադատել է «Բարսելոնում» հանդես եկող իր թիմակից Սամյուել Էտոյին, ըստ որի, իբր Պիեռն իրեն թույլ չի տվել իրացնել 11 մ հարվածը:

Հետաքրքրական է, որ 2000 թ. Սիդնեյի օլիմպիական խաղերում Վոմեն իրավամբ ազգի հերոս էր դարձել: Ֆուտբոլի մրցաշարի եզրափակիչում դիպուկ իրացնելով 11 մ հարվածը, նա իր հավաքականին օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսին արժանացրեց: Իսկ ահա այս անգամ ֆուտբոլասերները չներեցին նրան ու դաժանորեն վարվեցին: Այդ միջադեպը ստիպել է ֆուտբոլիստին լրջորեն մտածելու հավաքականում իր հետագա մրցելույթների նպատակահարմարության մասին:

Իսկ ահա Կոտ դ'Իվուարի հավաքականի հաջողությունն ըստ արժանվույն է գնահատվել: Երկրի նախագահ Լորան Գբագբոն ֆուտբոլիստներին ու մարզական կազմին 45 հազար եվրո արժողությամբ բնակարաններ է նվիրել, միաժամանակ պարգեւատրելով բանաձեւերով: Ահա թե ինչպիսի՞ արժեք ունեցավ չիրացված մեկ 11 մ հարվածը Վոմեի եւ Կոտ դ'Իվուարի ֆուտբոլիստների համար:

Ուրուգվայն ու Ավստրալիան կվիճարկեն ուղեգիրը

Ավարտվեց նաեւ Հարավային Ամերիկայի ընտրական գոտու մրցաշարը: 10 հավաքականներ վիճարկում էին աշխարհի առաջնության 5 ուղեգրերը: Ընդ որում առաջին չորս տեղերը զբաղեցրած հավաքականներն անմիջականորեն իրավունք էին ստանում հանդես գալու Գերմանիայում, իսկ 5-րդ տեղը զբաղեցրած թիմը պետք է անցումային խաղ անցկացներ Ավստրալիայի ընտրանու հետ: Ավարտական տուրից առաջ արդեն հայտնի էին ուղեգիր նվաճած չորս հավաքականները: Դրանք էին Արգենտինայի, Բրազիլիայի, Էկվադորի եւ Պարագվայի ընտրանիները: Վերջին տուրում որոշվեց նաեւ 5-րդ տեղը զբաղեցրած հավաքականը: Դա Ուրուգվայի ընտրանին էր, որը 1-0 հաշվով հաղթելով արգենտինացիներին, վաստակեց 25 միավոր: Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները՝ Բրազիլիա-Վենեսուելա՝ 3-0, Չիլի-Էկվադոր՝ 0-0, Պարագվայ- Կոլումբիա- 0-1, Պերու-Բոլիվիա՝ 4-1:

Անտուենիսը հրաժարական տվեց

Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական հերթական խաղում իսպանացիներից կրած պարտությունից հետո հրաժարական է տվել Բելգիայի հավաքականի գլխավոր մարզիչ Էմե Անտուենիսը: Եվ դա բնական է, քանի որ Բելգիայի հավաքականը 1974 թ. սկսած անփոփոխ մասնակցել է աշխարհի բոլոր առաջնություններին:

Դեւենպորտի յուրօրինակ նվաճումը

Ամերիկացի թենիսիստուհի Լինդսեյ Դեւենպորտը հաղթող ճանաչվեց գերմանական Ֆիլդերշտադում անցկացված մրցաշարում՝ եզրափակիչում պարտության մատնելով ֆրանսիացի Ամելի Մորեսմոյին (6-2, 6-4): Դա պրոֆեսիոնալ թենիսի մրցաշարերում Դեւենպորտի շահած 50-րդ տիտղոսն էր, ինչը յուրօրինակ նվաճում է:

«Ադիդասը» հետաքրքրվում է Ռոբինյոյով

Մարզական գույքի ու հանդերձանքի գերմանական հանրահայտ «Ադիդաս» ֆիրման ցանկանում է իր գլխավոր հակառակորդ «Նայքից» գնել Մադրիդի «Ռեալի» ֆուտբոլիստ Ռոբինյոյի գովազդային իրավունքները: Բրազիլացի ֆուտբոլիստը մինչեւ 2006 թ. ավարտը գովազդային պայմանագիր ունի կնքած ամերիկյան «Նայք» ֆիրմայի հետ: Սակայն գերմանացիները ցանկանում են տաղանդավոր ֆուտբոլիստին իրենց ներկայացուցիչը դարձնել արդեն աշխարհի առաջնության ժամանակ: «Ադիդասը» պատրաստ է Ռոբինյոյին վեց տարվա պայմանագիր առաջարկել 20 մլն ֆունտ ստեռլինգ ընդհանուր գումարով:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Տնտեսություն

Աշխատանքի հայտարարություն

ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման ինստիտուցիոնալ եւ օրենսդրական հզորացման ծրագիր» ընդունում է ստորեւ բերված աշխատատեղերի համար ՀՀ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումներ: Աշխատանքների մանրամասն նկարագրության համար կարող եք այցելել www.paconsulting.am ինտերնետային կայք:

1. ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետ, որ պետք է ունենա համակարգչային գիտելիքներ կամ համապատասխան այլ բնագավառի բարձրագույն կրթություն, ինֆորմացիոն տեխնոլոգիաների համակարգերի եւ ինտերնետային կայքերի ստեղծման եւ պահպանման մեջ նվազագույնը 5 տարվա մասնագիտական փորձ: Նախապատվությունը տրվում է ակտիվ, աշխատանքի հանդեպ պարտաճանաչություն դրսեւորող, հայերեն եւ անգլերեն լեզուներին (բանավոր եւ գրավոր) լավ տիրապետող անձանց:

2. Հաղորդակցության/ Դասընթացների մասնագետ, որ պետք է ունենա ժուռնալիստիկայի, հանրային կապերի կամ համապատասխան այլ բնագավառի համալսարանական կրթություն, նվազագույնը 3 տարվա մասնագիտական փորձ՝ ցանկալի է միջազգային ծրագրերում, միջանձնային եւ կազմակերպչական գերազանց հմտություններ, ինչպես խմբի հետ, այնպես էլ անկախ աշխատելու կարողություն, հայերեն եւ անգլերեն լեզուների (բանավոր եւ գրավոր) գերազանց հմտություն, ինչպես նաեւ համակարգչային գերազանց իմացություն:

3. Ջրային ռեսուրսների մոնիտորինգի մասնագետ (կես կամ մեկ դրույք), որ պետք է ունենա տեխնիկական կամ համապատասխան բնագավառի համալսարանական կրթություն, նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ մակերեւութային ջրերի չափումների եւ վերլուծությունների բնագավառում: Անգլերեն լեզվի բանավոր եւ գրավոր հաղորդակցության հմտությունը ցանկալի է:

4. Ստորգեցնյա ջրերի մոնիտորինգի մասնագետ (կես կամ մեկ դրույք), որ պետք է ունենա ջրաերկրաբանության կամ համապատասխան ոլորտի համալսարանական կրթություն, նվազագույնը 10 տարվա փորձ ստորգեցնյա ջրերի կառավարման, պահպանության եւ մոնիտորինգի բնագավառում: Անգլերեն լեզվի բանավոր եւ գրավոր հաղորդակցման հմտությունը ցանկալի է:

5. Գետավազանային պլանավորման/ Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մասնագետ, որ պետք է ունենա համալսարանական տեխնիկական կամ համարժեք այլ կրթություն եւ նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ բնական ռեսուրսների կառավարման, տնտեսական զարգացման պլանավորման, ջրային ռեսուրսների կառավարման կամ համապատասխան այլ բնագավառում: Թեկնածուն պետք է ունենա անգլերեն լեզվով հաղորդակցվելու հմտություն: Գետավազանների թվային մոդելավորման փորձը կդիտվի որպես առավելություն:

6. Տվյալների բազայի ծրագրավորող (կես դրույք), որ պետք է ունենա համակարգչային գիտությունների, կիրառական մաթեմատիկայի կամ համապատասխան այլ բնագավառի համալսարանական կրթություն եւ Microsoft Access ծրագրով աշխատելու նվազագույնը 5 տարվա փորձ:

Դիմելու կարգը.

Խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը (անգլերեն լեզվով) ուղեկցող նամակի հետ միասին, Ջրային ռեսուրսների կառավարման ծրագիր՝ Անի Չիբուխչյանին, հետեւյալ էլ. փոստով՝ Ani.Chibukhchyan@paconsulting.am կամ ֆաքսով՝ 58 60 13, մինչեւ հոկտեմբերի 21-ը:

EURASIAN UNDERGRADUATE EXCHANGE PROGRAM

WANT TO STUDY IN THE UNITED STATES?

The US Government invites first-, second-, and third- year undergraduate students (in five year programs) to enter an open competition for the 2006-2007 Eurasian Undergraduate Exchange Program (UGRAD). Finalists will attend classes for one year in a US university or community college!

For more information or application forms contact **IREX Armenia** or visit www.irex.org.
IREX Armenia, 29 Sayat Nova Avenue
Tel: (374 10) 52 66 23, 52 66 21, 52 66 42, www.irex.am

THE APPLICATION DEADLINE IS November 7, 2005, 17:00

MUSKIE
Bureau of Educational and Cultural Affairs

GET YOUR GRADUATE DEGREE IN THE UNITED STATES

The US Government invites graduate students and professionals from Armenia to enter an open competition for the 2006-2007 Edmund S. Muskie Graduate Fellowship Program (Muskie). Muskie can provide YOU with the opportunity for one-year non-degree, one-year degree or two-year degree study in the United States.

For more information or application forms contact **IREX Armenia** or visit www.irex.org.
IREX Armenia, 29 Sayat Nova Avenue
Tel: (374 10) 52 66 23, 52 66 21, 52 66 42, www.irex.am

THE APPLICATION DEADLINE IS October 31, 2005, 17:00

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-05/20 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի կարիքների համար կնիքի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 725 ՀՀ դրամ փոխանցել «ԲՏԱԻՆՎԵՍԲԱՆԿ» ՓԲԸ, Հ/Հ 175004670790, «ԳՈՀԱԿ» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Հ. Սարգսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 14:00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ԳՀԱՇՁԲ - 05/64 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ տարածային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կարիքների համար «2006թ. կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման եւ նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման եւ փորձաքննության» աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 3000.0 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Հ/Հ 247010010343 «Կոմունալախագիծ» ՓԲԸ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ. Մարկոսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00:

Բանկային վերահսկողության Բազելյան հանձնաժողովի տարածաշրջանային խմբի XVI-րդ կոնֆերանսը սկսեց իր աշխատանքը

Այսօր իր աշխատանքը սկսեց բանկային վերահսկողության Բազելյան հանձնաժողովի Անդրկովկասյան, Կենտրոնական Ասիայի եւ Ռուսաստանի Դաշնության երկրների տարածաշրջանային խմբի XVI-րդ կոնֆերանսը: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում են 12 երկրների ներկայացուցիչներ, այդ թվում՝ տարածաշրջանային խմբի երկրների (Հայաստան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստանի Դաշնություն, Տաջիկստան, Ուզբեկստան), ինչպես նաեւ Բազելյան հանձնաժողովի (Շվեյցարիա), Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչներ, հրավիրված ներկայացուցիչներ Բելառուսի, Հունգարիայի, Նիդեռլանդների, Ուկրաինայի վերահսկողական մարմիններից: Կոնֆերանսին ներկա են նաեւ հյուրեր Հայաստանի պետական կառավարման տարբեր մարմիններից եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում ներառված են բանկերում կորպորատիվ կառավարման կարգավորման, ռիսկերի վրա հիմնված վերահսկողության եւ ֆինանսական շուկայի միասնական վերահսկողության մարմնի ստեղծման հարցերը:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ԱՃՈՒՐԴ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Աճուրդի են հանվում գրասենյակային ու բնակարանային կահույք, համակարգիչներ, մեքենաներ եւ այլ ապրանքներ: Աճուրդային վաճառքը կկայանա 2005 թ. հոկտեմբերի 22-ին եւ 23-ին, ժամը 10:00-19:00 ԱՄՆ դեսպանատան պահեստում, որի հասցեն է Չարբախ, Արարատյան 90: Ապրանքները կարող եք զննել ուրբաթ օրը, հոկտեմբերի 21-ին, ժամը 10:00-19:00 եւ շաբաթ օրը՝ հոկտեմբերի 22-ին ժամը 9:00-10:00: Զննումն անվճար է:

Լոտերը վաճառվելու են այնպես, ինչպես կան (ԱՄՆ դեսպանատունը վաճառքի հանված ապրանքների որակի վերաբերյալ երաշխիքներ չի ապահովում): Կիրառվող աճուրդային վաճառքի նոր ձեւը թույլ է տալիս գնել լոտի առանձին իրեր. եթե ուզում եք մահճակալ, ապա կարող եք գնել միայն մահճակալը:

Պահեստ մուտք գործելու համար օգտվեք Շահրուրի փողոցի կողմի մուտքից:

Այն ֆիզիկական/իրավաբանական անձինք, ովքեր մաքսային վճարումներից զերծ գնումներ կատարելու իրավունք չունեն, պարտավոր են ապրանքը գնելուց հետո ՀՀ համապատասխան մարմինների հետ կարգավորել հարկային եւ մաքսային վճարումների հետ կապված հարցերը:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀՇՁԲ-05/82» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **Երեւանի քաղաքապետարանի «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Երեւանի Ամիրյան փողոցին հարող տարածքում եւ Աբովյան փողոցի 5/1 շենքի հարակից իրացման գոտիներում անշարժ գույքի գնահատման ծառայությունների» ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Հայ-Ինվեստ» բանկ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 115003450281 եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Զ. Մելիքսեթյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող՝ 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12.30-ին:

Կենտրոնական բանկը տեղեկացնում է

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի հոկտեմբերի 12-ի որոշմամբ գրանցվել է «Յունիբանկ» ՓԲԸ «Մարտունի» մասնաճյուղը՝ ք. Մարտունի, Երեւանյան 28 հասցեում:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Կորել է

ՀՀ արդարադատության նախարարի 15.06.1999 թ. թիվ 953 հրամանով գրանցված «Այրում» հիմնադրամի թիվ 15 վկայականը: Համարել անվավեր

IN ARMENIAN, RUSSIAN,
www.azg.am
ENGLISH AND TURKISH

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-93

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 13.10.2005, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Գինդ» տպագրատանը: